

111

ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ



ՈՐԴԻՆ ՀՕՐԸ ԲԱՆՏԱՊԱՆ

ԹԱՏԵՐԱԽԱՂ,

ԵՐԵՔ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՎ

ՎԵՐԱՁԵՑ

Հ. Ա. Վ. ԲԱՍՏԱՆՏԻԼԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ. — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1916

891.99
Բ - 27

891-99

Բ-27

13 APR 2017

ԳՐԱԳԱՐԱՆ

ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ



ԳՐԱԴԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ





ՈՐԴԻՆ ՀՕՐԸ ԲԱՆՏԱՊԱՆ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ԵՐԵՔ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՎ

ՎԵՐԱՄԵՑ

Հ. Ա. Վ. ԲՍՍԲԱՆՏԻՒԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1916

ԱՆՁԻՆՔ

ՀՈՒՔԱՐՏՈՍ ՔՈՒՄՊԼԵՊԷՐԻԻ, Էշխան Միլլուտի
և ուրիշ Գողակներուն

ԳԱՅՐԻԷԼ, Էր որդին

ԳԱԻԹ ՓՈՒՏԷՆԴԻՔՍԻ, Ֆելիեշուտլեմի գղեկին
բանտերուն պահապան

ՀԵՆՐԻԿՈՍ ՏՈՌԼԷՅ, գնդապետ

ԿՐԵԿՈՐ, հանրային այցելու ֆլավէրհապի տանուաւ-
րութեան

ԿՈՒՍՏԱՎ ՊՈԹՈՒԷԼ, բարեկամ Հոբարտոսի

ԹՈՄ ՀՈԼԼԻՏԷՅ, բարեկամ Կրեկորի

ՅԱԿՈԲ ՃԻՌՈՊԻ, նաւավար

ՍԱՄՈՒԷԼ, } Էր Էրիու որդիքը, — Սահակ էն
ՍԱՀԱԿ, } տարուան

ԳԷՈՐԳ ԿԱՏՏԻ, Դաւթի ծառան

ՍՊԱՅ, Կրեկորի

ՍՊԱՆԵՐ,

ՋԻՆՈՒՈՐՆԵՐ, } որոնք չեն խօսիր

ՋՕՐԱԿԱՆՆԵՐ,

ԾԱՌԱՆՆԵՐ,

Տեսարանն է ի Սկովտիա, — Ժամանակն է ԺԴ
դար:



646-92

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

Գորակաւ սրան՝ մէկտեղը բացուած, կաւ
փակուած վանդակով մը միայն, ուստի կաւնա-
րեւ ելնելով կը հասնուի իսկոյն գետակի մը
եզրը, որուն նաև հանդիպակողը պետք է ըլ-
լայ գործածելի: Խիստ հեռուն կը տեսնուի
բանձրախիտ անտառ մը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Հագիւր քե վարագոյրը կը բարձրանայ, կը
լսուի քնդակօրկերոս բռնիքն, և հեռուն կը
տեսնուի ծխոյ գունտեր:

ԳԱԻԹ միայն

Բայց վայ թշուառութեանս: Սատանի տան
կրակ մըն է այս: Ժամ մըն է՝ և աւելի իսկ՝
որ այս գեղայարմար երաժշտութեամբս ական-
ջիս թմբուկը կը ճաթեցնեն: Եւ սակայն՝ զար-
մանալին այն է՝ որ ոչ ոք կը շարժի ըսելու ինձ
թէ ինչ կայ: Գաբրիէ՛... Թո՛մ:



Տ Ե Ս Ի Լ Ե Բ Կ Բ Ո Ր Գ

ՅԱՍՈՒ և ՎԵՐԻՆԵ

- Յակ. (գարնոշրած). — Ողորմած Աստուած:
- Դառ. — Յակոբ, ի՞նչ ունիս:
- Յակ. — Ձե՞ս տեսներ. վախ: Մեռնելէս առաջ դժոխքը տեսայ:
- Դառ. — Բայց ի՞նչ հանդիպեցաւ: Չաւակներդ ո՞ր են:
- Յակ. — Ի՞նչ գիտնամ ես. չեմ գիտեր ուր են, ես...
- Դառ. — Ի՛հ, յիմար. քեզի դարձիր: Սովորական անխելքութիւններէդ մէկը պիտի ըլլայ անշուշտ:
- Յակ. — Թող որ ոգի աւնում, և յետոյ մազերդ տնկել պիտի տամ:
- Դառ. — Անհամբերութենէս հիմայ խելքս կորսընցնել պիտի տաս ինձ:
- Յակ. — Վախէ՛ս՝ բնաւ ինձմէ աւելի խելքդ պիտի չկորսնցնես: Երեք ժամէն քիչ մ'աւելի պիտի ըլլայ՝ որ ես կը գտնուէի ի Քլավէրհաւգ: Կեցած էի՝ ծովափին կապած նաւակիս մէջ՝ ծխափոց քաշելով, և սպասելով բարձրագոյն հրամաններու. երբ յանկարծ կը տեսնեմ՝ որ պալատին մեծ սանդղէն՝ մարդկան հեղեղ մը կ'իջնէ, մէկ մէկու ականջին այնպիսի բաներ փսփոսալով, որոնք՝ իրենց երեսներուն տժգունութենէն դատելով՝ մեծ կարեւորութիւն պէտք էին ունենալ: Բան մը գիտնալու հետաքրքրութիւն շարժելով, կ'ելնեմ նաւակէս, և կրցածիս չափ առանց նըլմարուելու կը մօտենամ անոնց. և անոնցմէ մէկէն կը լսեմ՝ որ զողոթնուն և երկիւղալից ձայնով կ'ըսէր միւսին. Այո, բարեկամ, Հո՛ւ-

քարտոս Գումպլէպէրրիի կուսակիցներն են... կը ժողովին ի Ֆիլիէգուալէմ՝ տաճարին դիմաց... դէպ ի ծովեզրը: Ճիշդ այս ժամուս, հանրային այցելու մը՝ բոլորովին ծպտեալ՝ կը մեկնի դէպ ի հոն: Տեսնենք... Երեւակայէ՛, թէ ինչ սարսուռ զգացի՝ երբ լսեցի թէ գործն ինչ բանի վրայ էր... Ճիշդ Ֆիլիէգուալէմի մէջ, ուր տունս է... Եւ մինչդեռ այս նիւթիս վրայ ցնորքներ կը ստեղծէի, սպայի մը ձայնը կը լսեմ՝ որ զիս նաւակին կը կանչէ: Ա՛րն՝ թանամ, և կը տեսնեմ՝ որ քանի մը զինուորներու մէջ արդէն տեղ բռնած էր՝ աչքներուն վրայ իջած մեծ գլխարկով մարդ մը, և բոլորովին իւր լօգիկին մէջ փաթթուած:

Դառ. — Ա՛հ, ապահովապէս այցելուն էր:

Յակ. — Գուշակեցիր: Ֆիլիէգուալէմ, կ'ըսէ ինձ այն սպայն, լուս և շուտ, եթէ մորթդ քեզ սիրելի է: Կրկնել չտուի, և ժամ մը չքշած՝ սրընթաց թիավարութեամբ հոս հասայ: Հազիւ հասած, այն զինուորներէն մէկը հրաման ընդունեցաւ երթալու Գնդապետին իմացնելու իւր գալուտը, և պատուիրելու իրեն՝ որ զինէ թէ՛ զիւրին և թէ՛ զդեկին պահապան գործը, աւելցնելով՝ որ իրմէ առաջ երթայ հին ամբողջին աւերակներուն մէջ, ուր պիտի գայ հաղորդելու իրեն մեծ կարեւոր գործեր: Չինուորը կը մեկնի, և այլք կը հետեւին անձանթիին, որ սիւպիլայի մը պէս խորհրդաւոր, միշտ մեծ զգուշութեամբ չորս կողմը նայելով, այս դղեկիս ճամբան բռնեց, և թողուց զիս որ հանգըտեամբ տունս դառնամ: Հագիւ թէ ներս մտայ, երկիւղս երկու գաւակներուս յայտնեցի. տեսայ որ տժգունեցան, և... գուշակէ: Իրենք կը յայտնէին ինձ՝ որ ամբողջ օր մըն է՝ որ կարեկցութեամբ ընդունել էին տունս մարդ մը, որ բոլորովին զինուորի երևոյթն ունէր: Աշտղակ մը փրցուցի, և սեղմելով

թեւերուս մէջ Սամուէլս և սիրելի Մահակս. կորսուած ենք, կանչեցի. իմ տունս անծանօթ մը: Եթէ գիտնան, կորսուած ենք: Այս յուսահատութեան ձայներէս, զինուորը կ'ելնէ իւր սենեկէն, և շանալով խաղաղեցնել զիս. Հանդարտէ, կ'ըսէ, զքեզ վտանգի մէջ դնելէն առաջ՝ կ'ուզէի հազար անգամ մեռնիլ: Եւ այսպէս ըսելով տունէն դուրս ելաւ կայծակի արագութեամբ: Ի՞նչ ազնուական մարդ, բնաւին գոհ՝ աղաղակեցի, ի՞նչ ազնուական մարդ. և մեր ափշուէնէն սթափած, մենք երեքս ալ արտաքոյ կարգի խնորժով ճաշեցինք: Բայց կերակուրին կէսին՝ կը լսենք ամէն կողմանէ փողեր և թմբուկներ, հրացանի և թնդանօթի հարուածներ: Հետաքրքրութիւնը կը մղէր զիս որ բան մը գիտնալու համար տունէն դուրս ելնեմ. սակայն երկիւղը յաղթեց ինձ և երկու զաւակներուս հետ գնացի ծածկուեցայ զինտան խորը:

Դառ. — Վատասիրտ: Գու միշտ նոյն մարդն ես:
 Յակ. — Ի՞նչ կ'ուզես: Երիտասարդ եմ. և կըրնայի շատ տարիներ կորսնցնել. և ուրիշ կողմանէ խոհեմութիւնը վեր է ամէն առաքինութիւններէ: Վերջապէս՝ համատօտիւ, անկէ քիչ յետոյ իմ երկու ազգականներս տունս կը մտնեն, և կը պատմեն ինձ՝ որ բազմաթիւ անձինք՝ քանի մը օրէ ի վեր՝ ծածուկ կը հաւաքուին ամրոցին աւերակներուն մէջ, պատրաստելով Միլվուտի իշխանին բնաջինջ կործանումը, որ՝ ինչպէս զիտես, քչեց աւատէն մեր օրինաւոր տէրը. և թէ գործին վրայ բըռնուած էին, և անոնց մէջ կար... ափշէ, առնուանի շուքարտոս փումպլէպէրրին: Չի լքանի թէպէտ և յանկարծակիի եկան և ընկճուեցան բազմութենէ, այլ սովալլուկ առիւծի նման յարձկելով մեր զինուորներուն վրայ, տեղի տալէն առաջ, անոնցմէ շատերը զրկեցին միւս

աշխարհ: Վերջապէս յաղթահարուեցան, և անոնցմէ ոմանք փախան, ոմանք վիրաւորուեցան, և ոմանք մեռան: Մեր Գնդապետին ձեռքը երկու հոգի միայն ինկան կենդանի, զորս քիչ ատենէն բերել պիտի տայ այս դղեկիս մէջ՝ Աստուած գիտէ որչափ ժամանակ բանտերու մէջ փակելու:

Դառ. — Խեղճ մարդիկ: Կը գուշակեմ իրենց վիճակը, և իմս կ'անիծեմ՝ որ կը դատապարտէ զիս անոնց հետ անգութ ըլլալու, պարտքս կատարելու համար:

Յակ. — Եկայ իմացնելու քեզ, որ այսօր քու անունիդ տօնն ըլլալով, ուշկեկ պիտի գամ՝ որդիներուս հետ՝ շիշ մը խմելու քեզ հետ:

Դառ. — Ա՛հ այո, դժբաղդութիւններուն հետ զուարթ ըլլալու ճիշդ օրն է:

Յակ. — Ինչ որ եղած է, եղած է. ալ անոր վրայ չմտածենք: Սակայն ո՛ր է սիրելի զաւակդ Գաբրիէլը. երթալէս առաջ կը փափաքէի որջունել զինքը:

Դառ. — Ի՞նչ գիտեմ ես թէ այսօր ո՛ր որջացեր է. որչափ զինքը կը կանչեմ՝ չուզեր պատասխանել:

Յակ. — Է՛հ թող, Գաւիթ, մի խոժոռիք, որ արդէն գիտենք թէ անուշեղէնի պէս քաղցր սիրտ մ'ունիս: Երկու տարիէ ի վեր՝ որ կը վարես այս դղեկիս բանտերուն պահապանի պաշտօնը, բարեգործութեամբ ամէնուն օրննէնքը վրադ շարժեցիր: Այնպէս կակուղ սիրտ մ'ունիս... ամէնքը կը սիրեն զքեզ... մասնաւորապէս Սամուէլս և Մահակս, քու սիրելի սանիկդ:

Դառ. (ցաւուամբ). — Վերջացուր և բանդ գնա, որ եթէ անգամ մը բարկութիւնս արթննայ... կը հասկցնեմ քեզ:

Յակ. — Մի գայրաճար՝ կ'երթամ հիմա: Ողջունէ պար. Գաբրիէլը, ըսէ իրեն՝ թէ քանի

մը ժամէն կը տեսնուինք... Բայց կ'աղաչեմ, այն տղուն հետ բարկութեամբ չհերթաս:

Գառ. (ստուշները զարնկոյով). — Աերջապէս կ'ուզե՞ս երթալ կորսուիլ՝ այժմ թէ ոչ:

Յակ. — Տէր ողորմեա՛: Կ'երթամ, կ'երթամ (կը մեկնի յախուկոյ):

Գառ. (քիչ մը դադարեկէ յետոյ՝ պտրտելով). — Այն խեղճ մարդն ահաբեկելով՝ շատ համոզ գործ մ'ըրի: Բայց, շատ իրաւ է. աղէկ գիտեմ ես՝ թէ որչափ սուղի կը նստի ինձ այս իմ բնաւորութեան սաստկութիւնը: Ամօթ. այս հասակիս հասնիլ, և չգիտնալ զօպէլ զիս: Եւ այս պատճառաւ է՝ որ զիս յարմար համարեցան բանտի պաշտօնին: Եւ այո, լաւ զիտէ Տէր՝ թէ քանի՛ արցունք թափեցի այս երկու տարիէս ի վեր: Եւ հիմա դարձեալ սրչափ պիտի թափեմ՝ այս նոր ձերբակալուած թշուառներուն համար, և իմ բարի տիրոջ ողորմոյն ձայնորդութիւններուն համար: Ո՛ր գիտէ՛ թէ այժմիկ ս'ըր կը զանուի: Թերևս արդէն պատերազմի մէջ մեռած է: Թերևս բանտարկեալներու մէջ է: Ո՛հ եթէ կարենայի, զինքը ճանչնալ: Բայց ի՞նչպէս ընելու է: Ճիշդ 15 տարի է՝ որ զինքը տեսած չեմ: Այլ եթէ ի՞նքը զիս ճանչնար: Ո՛հ ի՞նչ դժբաղդ եմ ես: Խօղ Գաբրիէլ: Ա՛հ, թէ որ գիտնար թէ որո՞ւն որդին է... Բաւական է: Բայց ինքն ս'ըր է որ չտեսնուիր: Գաբրիէլ, Գաբրիէլ:

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Գ

ԳԱԲՐԻԷԼ և ՉԵՐԻԿԸ

Գար. — Ահաւասիկ եմ, ահաւասիկ եմ, հայր իմ:

Գառ. — Է՛հ, փղի՛ մարմին: Կ'ուզե՞ս գալ թէ ոչ, երբ գրեզ կը կանչեմ:

Գար. — Բայց հայր իմ...

Գառ. — Հայր իմ, հայր իմ... դու ուրիշ բան ըսել չես գիտեր: Բայց միանգամայն պէտք ես գիտնալ, որ ես ծեր եմ, և միայն չեմ կըրնար ուշ դնել ամէն գործերուն: Կրողը տանի. ամօթ է: Տէս աշխարհք ի՞նչպէս կ'երթայ: Հիմա ծեր ըլլալուս համար՝ ամէնքը զիս երեսէ կը ձգեն և կը թողուն հոս՝ իբրև թէ անարգ շուն մ'ըլլայի: Ամօթ է, ամօթ:

Գար. (անուշաշրեամբ). — Լմնցուցի՞ր:

Գառ. — Բաւական չե՞ք քեզ:

Գար. (ժպտելով). — Շատ ալ է, սիրելի պապ. և յիրաւի չեմ գիտեր՝ թէ ինչպէս կրնաս դու տալ ինձ այս յանդիմանութիւններս, ինձ:

Գառ. — Մինչև հիմայ ս'ըր էիր:

Գար. — Պահ մը պարտեզ գնացեր էի, ուր նոր խօղ հասան՝ տնակին վրայ աշխատող գործաւորներն:

Գառ. — Ի՞նչ գործ ունիս դու գործաւորներու հետ:

Գար. — Հետաքրքիր էի լսելու այն քիչ մ'առաջուան լսուած ահաւոր շոտաչին պատճառը և կատարածը:

Գառ. — Եւ մի և նոյն միջոցին կը թողուս զիս հոս միայն արծուի մը պէս կանչելու և ափրիկեցիկ մը պէս հայհոյելու: Եւ գիտես ալ թէ սրչափ գէշ կ'ընէ ինձ անհանգիստ ըլլալը:

Գար. — Ամնչափը գիտեմ, և ասկէ ետքը՝ զքեզ չբարկացնելու համար՝ քովեզ այլ ևս չեմ գատուիր:

Գառ. (կրքալով անուշաշրեամբ). — Այլ ևս չէ: Շատ բան մը չէ պահանջածս: Աղէկ գիտեմ, թէ քու հասակիդ մէջ... բարձրացուր զըլուխը... նայէ ինձ:

Գար. — Հաշտուինք, պապ, հաշտուինք:

Գառ. — Այո, սիրելի, այո, հաշտուեցանք (հսկոյալ): Բայց ինձ ալ պապ մի ըսեր, կոչէ

զիս միշտ քու հայրդ (նաևգիտտ): Հիմայ մեր պարտքին զբաղինք: Գիտե՞ս, որդեակ իմ, որ քիչ ատենէն երկու բանտարկեալներ հոս պիտի բերուին:

Գար. — Եղո՞ւկ ինձ: Յանցաւոր պիտի ըլլան. բայց թշուառ են, և իրենց վշտակից կ'ըլլամ:

Գառ. — Է՛հ, յանցաւոր չեն, իրենց տիրոջը՝ Միլվուտի օրինաւոր իշխանին՝ ինչ որ կ'ըսուի՝ հաւատարիմ՝ պաշտպաններն են: Երկու կտրիճ զինուորներ են:

Գար. — Զինուորներ: Ո՛հ, հայր իմ, հիմայ աւելի ևս իրենց վիճակը զիս կը տրամեցնէ: Լաւ գիտես դու՝ թէ ինչ բարիք ըրաւ ինձ զինուոր մը, երբ քանի մ'ամիս առաջ, քու նոր վախճանած քրոջդ՝ իմ հէք մօրաքրոջս քով՝ խեղճութեան մէջ կը տառապէի Կլասքովի գիւղին մէջ:

Գառ. — Գիտեմ, գիտեմ. կը յիշեմ զայն, և միշտ աղօթք կ'ընեմ որ նա վարձքն ընդունի:

Տ Ե Ս Ի Լ Զ Ո Ր Ր Ո Ր Գ

Գեորգ և վերիներ

Գեորգ. (աձայարաւօր). — Տէր իմ, տէր իմ, այս վայրկենիս կը դառնայ ի դղեակ մեր բարի Գնդապետը, և իրեն հետ կու գայ անձանօթ մը՝ բազմաթիւ զինուորներով, որոնց մէջ երկու բանտարկեալներ կան:

Գար. — Երկինք, ինչպէս սիրտս կը բաբախէ:

Գառ. — Փութով կու գամ զիրենք ընդունելու: Եւ դու, Գաբրիէլ, այս սրահիս մէջ սպասէ ինձ, ուր քիչ մը ժամանակ պիտի թարթափին բանտարկեալները, մինչև որ ես Գնդապետէն օրինաւոր հրամաններն առնում (կը մեկնի):

Գար. — Այո, հայր իմ: Եւ դու, Գէորգ, հետը ընկերէ՛:

Գեորգ. — Շուտ մը, պար. Գաբրիէլ (կը մեկնի Գաբրի ձեռ):

Գար. — Ճի՛շդ այսօր. ո՛րչափ դժբաղդ եմ: Այսօր՝ որ բերկրութեամբ պէտք էի տօնել բարերարիս ծննդեան օրն, ընդհակառակն այսօր պէտք եմ յուզուիլ և վշտագնիլ այս հէք բանտարկեալներու բաղդին վրայ: Ո՛հ, Տէր իմ, իմ պաղատանքս այս է միայն, որ չուզես թողուլ զիս այլ ևս ընդերկար այս վիճակիս մէջ, որ դիւրագորով սիրտ մը ունեցողի՝ համար եղած չէ: Ահաւասիկ Գնդապետը, ահա զինուորները, և ամէնքէն վերջը ծանրաքայլ կու գան այն ողորմ բանտարկեալներն:

Տ Ե Ս Ի Լ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

Հեռուս, Հոնֆաբոս, Կոնստան, զիճուորք և վերիներ

Հեռ. — Այս բանտարկեալներս, Գաբրիէլ, արդէն հօրդ յանձնուեցան: Թող կենան ասոնք այս սրահիս մէջ, քեզ կը յանձնարարեմ զիրենք (կը մեկնի):

Գար. — Մի՛ տարակուսիր, պիտի պահպանուին իրենք: Գուք (զիճուորաց) կրնաք երթալ. (նայելով Հաբարտոսի՝ որ աչքերը երկիկնք սևեռած է, և մեկ ձեռքով կը կարդնի Կոնստանի ռուսին) (Ի՛նչ վեհաշուք կերպարանք. ինչ ազնուական աներկիւղութիւն) (մեղմով անոր մօտեակարով) Տէր, ներէ ինձ որ... (ձանկեարով զիկրը) Աստուած մեծ, զով կը տեսնեմ:

Կոռս. — Ի՛նչ եղաւ:

Հռ. — Ի՛նչ աղաղակ է:

Գար. — Բարի՛ր Աստուած. կարելի՞ է այն:

Հը. — Կուտտավ, այս տղաս...

Կոռ. — Ինքիրմէ դուրս կ'երևի:

Գար. — Չէ՞ս ճանչնար զիս:

Հը. — Ո՞հ երկինք... կեցիր... կարծեմ...

Գար. — Կլտսքովի գիւղը յիշէ:

Հը. — Ո՞հ, Գարբիէլ...

Գար. — Ո՞հ, իմ բարերարս (դիմելով և սեղմելով իւր ծունկերն):

Կոռ. — Հսիքարտոս, ի՞նչ ըսել է այս:

Հը. — Է՛հ, ոչինչ: Ինքը բարեգործութիւններու վրայ կը խօսի, բայց ես չեմ գիտեր...

Գար. — Ես լաւ գիտեմ... լաւ կը յիշեմ թէ որչափ պարտական եմ քեզ:

Հը. — Բայց վերջապէս ես ի՞նչ ըրի քեզ:

Գար. — Գու խղճիդ հարցուր զայն:

Հը. — Ի՞մ խղճիս:

Գար. — Կը հարցնե՞ս թէ ինձ համար ինչ ըրիր: Առանց քեզ, այն որ ինձ մօր տեղ եղաւ, պիտի մեռնէր զուրկ ամէն օգնականութենէ. որովհետեւ այն քիչ դրամն՝ որ ունէինք՝ ամէնն ալ ծախսեր էինք իւր հիւանդութեանը համար: Առանց քեզ, չէի կրնար և ոչ ամենապարզ քարով մ'անգամ ծածկել այն ափ մը հոգն՝ ուր կը հանգչի յաւիտեանական, աշխարհիս լաւագոյն կիներ: Եւ դուն իմ բարերարս, դու հօգուով այնքան առատ և սրտով վեհանձն, դու երկաթներու մէջ ես: Ա՛հ, տարակոյտ չկայ թէ ոճիրը չէ որ զքեզ այս արհաւիրաց տեղերս ձգեց: Շատ անգամ բաղդը բարիները կը հալածէ: Գու անոր զո՞հ մըն ես, սակայն անմեղ: Սիրտս կ'ըսէ ինձ՝ այն իւր բաբախումներուն մէջ. քու աշուրներդ, քու ճակատդ կ'ըսեն ինձ. Գու անմեղ ես. և ես ոտքդ կը դնեմ իմ արտասուացս հարկը, և կը խնդրեմ երկնքէն՝ իմ հօգուոյս բոլոր եռանդեամբը՝ քու փրկութիւնդ:

Կոռ. — (Քար մըն ալ կը շարժէր):

Հը. (դաշն և ընդհատ ձայնով). — Շնորհակալ եմ քեզ, ազնիւ տղայ, շնորհակալ եմ: Հանդարտէ, զսպէ գքեզ. երկնից կամքն էր՝ որ ես իմ թշնամիներուս ձեռքն իյնամ: Արտաքին երևոյթը շատ անգամ խաբուսիկ է: Մարդը՝ մարդու աչքէն կը ծածկուի, այլ երկնային հայեցումսն ամենուրեք կը թափանցէ: Բաւ է այսչափ. չտկարացնես զիս քու արցունքներովդ՝ հիմայ որ մեծագոյն խրախուսի պէտք ունիմ: (Յետոյ պիշ պիշ և այլևայլ իրեն մեծ յուզմամբ). — Այլ արդար երկինք, ի՞նչ ունի այս պատանիս իւր վրայ՝ որ այնչափ յուզեց զիս առաջին անգամ որ զինքը տեսայ, և հիմա ևս այնքան զիս կը շարժէ մինչև արտասուելու, որ... Ո՞հ, ո՞ր է՞ որ կը տանի զիս իմ հրաբորբօք երեակայութիւնս:

Գար. — (Կարծես թէ ինքը կը փափագի միայն մնալ՝ իւր զգացումները դուրս գեղու համար: Ինչո՞ւ զինքը նեղել ունայն խօսքերով: Երթամ մանաւանդ հօրս պատմելու այս մեծ գիտտ և իւր հետը մտածելու բոլոր այն կարելի միջոցներուն վրայ՝ իրեն օգնելու և ամոքելու իւր աղէտքը: (մեկնելով) Սիրտս արցունքով ուտած է, իրեն դիմաց չեմ կրնար զիս բռնել): (Կը մեկնի նասարակածեմ):

Կոռ. — Ի՞նչ է այս Հսիքարտոս: Ո՞ւր է ամէն վտանգներէ գեր ի վերոյ և ամէն մարդկեղէն երկիւղ արհամարհող քու մեծ հօգիդ:

Հը. — Ա՛խ, Կուտտավ, մեր արդար դատը գրեթէ կորսուած է: Գեղեցկափայլ յոյսերու ծայրէն՝ գլորեց զմեզ բաղդը ահաւոր վհի մը մէջ, ուր արդէն թաղուած կը տեսնեմ վերելքի ամենայն գաղափար՝ վերստին ստանալու իմ անցեալ մեծութիւնս: Ո՞հ դուրափոփոխ բաղդ: Ո՞վ այն որ հասնի քու թոշանացդ: Գու օժանդակ կ'երևէիր մեր խորհուրդներուն: Ուրիշ

օր մը, ուրիշ օր մ'ալ միայն, և իմ բարի հպատակներս պիտի ողջունէին զիս նորէն իրենց աւատառուն և իշխանը: Ընդհակառակն այժմիկ, ինձ հետ եղող բոլոր բարեկամներն և ազգականներն, ինկած ամէնքն ալ անակնկալ մատնութեան մը տակ:

Կոչ. — Եւ չարագոյն պիտի հանդիպի. վասն զի մեր պարտութեան լուրը՝ ետ կեցուցած պիտի ըլլայ Կլասքովի և Պէլքոնէնի բնակիչներն՝ որ մեզ օգնութեան կու գային:

Հռ. — Ահ դժբաղդաբար, ո՞վ կուզով... Ա՛խ քննչ ըրի, ո՞վ Տէր, որ զիս այսպէս հալածես: Իմ որդեակս կորսնցնելէն յետոյ...

Կոչ. — Եւ ինչո՞ւ կ'ուզենք չարացնել մեր վիճակը՝ յիշելով դէպք մը...

Հռ. — Այո, կուտզով, պատահար մը՝ որ բոլոր կեանքովս զիս հայրերուն թշուառագոյնն ըրաւ: Այն սոսկալի գիշերուան մէջ, յորում յարձակեցան դղեկիս վրայ, այս հիմա տասնըհինգ տարի է, կորսնցուցի ես միակ գաւակս դեռ մանկիկ, և որչափ որ փնտոցելի կարելի չեղաւ զիտնալ թէ ինչ եղաւ իրեն: Ո՛հ, կուտզով, թէ դու հայր ըլլայիր, կը ճանչնայիր իմ ցաւս:

Կոչ. — Բայց վերջապէս 15 տարիէն ետքը՝ առանց լուրի մը՝ պէտք ես հանդարտիլ և համակերպիլ Նախախնամութեան կամքին հետ:

Հռ. — Բաւական են արդեօք 15 տարիներ՝ ինձ մոռցնել տալու համար որ ես հայր եղայ: Ո՛հ, Եմիլիոս, ո՞ գիտէ՝ թէ հիմա ուր կը գտնուիս: Թերևս քու թշնամիներուդ մէջ, թերևս մեռած. և քու հայրդ... ախ որ նաև ինքն...

Կոչ. — Հանդարտէ, Հոլքարտոս, ով գիտէ՝ թէ չկարենանք գտնել ազատութեան միջոց մը:

Հռ. — Ոչ, բարեկամ, չեմ յուսար: Երբ իմ ընտանիքովս՝ որ տակաւին հօրս էր, և նաև ինքն ալ մեր օրինաւոր ժառանգութեան յա-




վերջտակողը վանելու հետամուտ, մատնուեցայ յանկարծակի իմ պաշտպանեալներէս, ասոնցմէ խողխողուած տեսայ արեանկիցներուս մեծ մասը իմ աչքերուս տակ, և ուրիշ մաս մը մշանջնաւոր արքորման դատապարտուած: Թշուառութիւն և թշնամանք կը հալածեն ըզմեզ ամէն կողմ: Վերստին կը ծագի հուսկ ուրեմն մեր վրիժառութեան յոյսն և ստանալու իմ հին իշխանութիւնս: Կը չարժեմ բարեկամներ, կը վարձկանեմ դաշնակիցներ. զօրաց կարգերն յարդարուած են, և գաղտուկ կը տեսնեմ նորէն ծննդեան երկիրքս: Սակայն յայտնուեցաւ դարձեալ խորհուրդս՝ անպատժութեան ըզձիցս համար՝ նոյն իսկ իմ մերձաւորներէս մէկէն, և հարիւրաւոր անպարտներ ինձ համար կ'ընկճուին, ինձ համար խժդժաբար կը սպաննուին:

Կոչ. — Խաղաղէ, Հոլքարտոս, ազնուականութեամբ հպատակինք մեր բաղդին, և չյուսահատինք դեռ անոր պաշտպանութենէն: Ըսիր իսկ ինձ՝ որ այս բերդին գնդապետն, այն Հենրիկոս Տոուլէյն է՝ որ իմ տղայութեանս բարեկամն էր, և քու դատախարակութեանդ ընկերն:

Հռ. — Ստոյգ է. նա իւր առաջին տարիներուն մէջ ապրեցաւ իմ ընտանեացս ծոցը, հայրս գորովանօք կը սիրէր զինքը. մենք փոխանակաւ զիրար եղբայր կը կանչէինք, և ամէն տեղ իբրև բարեկամութեան նախաօխպ կը յիշուէինք. այլ երբ յափշտակողը աւատին վրայ խուժեց, ինքն այս վերջինիս աշակից եղաւ, յայտնելով այսպէս ինքզինքն համարձակ հակառակորդ ընտանեացս և մի և նոյն ժամանակ արդարութեան: Եթէ այսօր յաջողէր մեզ բաղդը, պէտք էի զինքը խտրել պատժել: Ի՞նչ կ'ըսեմ... Ոչ, իմ սիրտս կարող չէ ընելու այդ բանը: Կը սիրեմ զինքը, կը սիրեմ տա-

Գրորե. Թատր. 11.



կաւին, և արդէն ես ինձ երդունցեր էի կամ
 ազատել զինքը, կամ իրեն հետ մեռնիլ:
 Կոչ. — Լուսթիւն, վասն զի Գնդապետին բնա-
 կութենէն մարդ կու գայ: Ինքն իսկ է:
 Հը. — Հենրիկոս... Ո՛հ ինչո՞ւ չեմ կրնար փախ-
 չիլ այս կուէս:

Տ Ե Ս Ի Լ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

ՀՆՐԻԿՈՍ և ՎԵՐԻՆԵՐ

Հեկ. — Կուտապ, անցիր մերձաւոր սենեակը,
 և դառնալու համար՝ իմ հրամանիս սպասէ:
 (Կուտապ կ'ընկէ Հռիքարտոսի ձեռքը սրմե-
 լեկ կտրել):
 Հեկ. (Հարժու՛մ մը կ'ընկէ Հռիքարտոսի բազ-
 կացր մէջ նետուելու նաւար). — Ո՛հ, Հռի-
 քարտ:
 Հը. — Կեցի՛ր:
 Հեկ. — Ինչպէս: Դու կը մերժես բարեկամի
 մը սէրը:
 Հը. — Բարեկամի՞ մը: Ես կը տեսնեմ ի քեզ
 Հալլան-Քլավէրհազի կուսակից մը, որ կը
 ծառայէ իւր ամբարտաւան և անգութ խոր-
 հուրդներուն: Ես քու բանտարկեալդ եմ: Հա-
 պա, արժանի ցուցուր զքեզ ազնուական ա-
 նուան՝ զոր տունին քեզ իմ թշնամիներս. հրա-
 ման տուր որ զիս տանջեն. դու իսկ քարշէ
 ի կախադան քու մանկութեանդ մտերիմը,
 գայն որ զքեզ եղբայր կը կոչէր: Հապա, այս-
 պիտի վեհանձն գործով մը պսակէ քու աս-
 պարէզը, ահա ես պատրաստ եմ: Արիացի՛ր,
 բաղդս ձեռքդ է:
 Հեկ. — Հռիքարտ, դու կը ճնշես զիս քու կըշ-
 տամբանքներովդ: Ճշմարիտ է՝ թէ ատելու-
 թիւնդ զրգոցի և արհամարհանքդ. այլ այս

օրս պէտք է ջնջէ երիտասարդական ամփոք-
 ձութեամբ դրուած գարշելի արատն, և որուն
 համար ոչ միայն քու աչքիդ, այլ և ամէնուն
 ալ նուաստացած եմ և արատուած: Դու դեռ
 ես կը կարծես զիս հրէջ մը, մատնիչ մը: Բայց
 ոչ... ոչ. ճանչցիր թէ ինչ է աւելի հասուն
 հասակի մը մէջ բարեկամիդ սիրտը. կարե-
 կից եղիւր աղիտաւոր կուրութեանն՝ որ մղեց
 զիս այս ահաւոր անդունդին մէջ, և շնորհէ
 ինձ քու համարումդ: Կ'աղաչեմ, Հռիքարտոս,
 շնորհէ ինձ քու մտերմութիւնդ:
 Հը. — Ի՞նչ կը լսեմ. դո՛ւ ինձ այս լեզուով կը
 խօսիս:
 Հեկ. — Դեռ պատանի՛ ես զքեզ սիրեցի եղբօր
 մը խանդադատանօք: Կենացս գեղեցկագոյն
 տարիները քեզ հետ անցուցի, և հոսեցի ա-
 նընդհատ յորդ արցունք քու ձախորդութիւն-
 ներուդ վրայ... Եւ դու հիմա կրնաս հաւա-
 տալ՝ որ ես ուզեմամ քու դահիճդ ըլլալ, և
 թէ անօրէններն իմ միջոցովս... Ո՛հ, թող
 իմ վրաս իյնայ քեզ սպառնացող մահը, եթէ
 երբեք իմ մտացս առջև ելնէ գաղափարն ան-
 զամ, միայն գաղափարն՝ այսպիսի գարշելի
 եղերան մը:
 Հը. — Հենրիկոս, կարելի՞ է:
 Հեկ. — Չկորսնցնէք ունայն բացատրութիւն-
 ներով այն վայրկեաններն՝ զորս երկինք կը
 շնորհէ՝ իբրև վերջիններ: Հռիքարտոս, ես
 զքեզ պիտի ազատեմ:
 Հը. — Արդար երկինք:
 Հեկ. — Երդունցեր են զքեզ մեռցնելու, և չես
 կրնար անոր վրայ երկբայիլ: Քու մահդ ան-
 տարակոյս է: Վերագարձիդ պատճառը ծա-
 նօթ է Հալլան-Քլավէրհազի և իրենց կուսա-
 կիցներուն՝ որ քու կորստենէդ իրենց ազա-
 տութեան յոյսը կը հետևցնեն:
 Հը. — Կրնան խաբուիլ:

Հեն. — Ի՞նչ օգուտ, եթէ անոնք այնչափ աւելի անողորբելի են՝ որչափ աւելի սպառնալիք տեսնենք: Սակայն ես զքեզ կրնամ ազատել իրենց վրէժխնդրութենէն: Շատ իսկ ծառայեցի՝ իրենց յափշտակած իշխանութեանը. և միայն իրենց լուծին խտտութիւնը՝ կրցաւ պահ մը խեղդել հոգւոյս մէջ խղճին ահարկու աղաղակը: Քու տեսիլդ, ձայնդ, խօսքերդ կը յիշեցնեն ինձ առաքինութիւնը, և արիութիւնս կ'ամրապնդեն: Այո, բարեկամը և եղբայրն ազատելու, արգարութեան յաղթանակել տալու և անցեալ դրժանքս դարմանելու համար, աներկիւղ աչքս պիտի առնեմ վտանգներն, և պիտի մեռնիմ եթէ պէտք ըլլայ, ցնծութեամբ՝ անզուժ և անազորոյն տանջանքներու մէջ:

Հռ. (յողով ինքզինքը ակնոր բազկացը մէջ). — Ո՛հ Հենրիկոս, ո՛հ եղբայրս:

Հեն. — Միտ դիր ինձ. այն մարդը՝ որուն յանձնուեցաւ զքեզ ձերբակալելը՝ է կրէկոր, հանրային այցելուն: Սա միշտ դղեկիս մէջն է, և պէտք է հարցափորձէ զքեզ՝ այս վերջին օրէնքս կատարելէն յետոյ շուտ մը Քլաւդէրհաւզ դառնալու համար: Մինչեւ որ ինքն հոս է, իւր ներկայութեամբը ես կապուած կաշկանդուած եմ. բայց այս երեկոյ այս տեղերէս պիտի հեռանայ, և ես ազատ եմ քու բաղդդ տնօրինելու:

Հռ. — Բայց, զքեզ չըջապատող մարդիկը:

Հեն. — Ամենայն ինչ նախատեսցի: Մեծագոյն խտտութեամբ քու վրադ հսկելու պատճառանքով՝ ես զքեզ իմ բնակարանիս մէջ պիտի պահեմ: Բերդին այս մասը՝ բանտերուն գործնական հսկողութեան տակ չէ, և բուն այս գիշեր իսկ շղթաները պիտի խորտակեմ:

Հռ. — Վեհանձն հոգի, կը մտածես ազատելու զիս, և քեզ սպառնացուած վտանգին վրայ չես խօսիր:

Հեն. — Ես կը տեսնեմ՝ քու վրադ կախուածը: Հռ. — Եւ ես գիտեմ թէ արդէն դատապարտուած եմ, և թէ մահս սահմանուած է:

Հեն. — Բայց ուրիշ կողմանէ չէ՞ս գիտեր որ ամէն վայրկեան կեանքդ կրնայ վտանգի մէջ ըլլալ, առանց իմ կարենալուս՝ զքեզ ոչնչացնող հարուածը խտորեցնել և նախատեսել տանջանքին վայրկեանը: Ծածուկ թոյն մը...

Հռ. — Ի՞նչ կ'ըսես դու...

Հեն. — Ի՞նչպէս գուշակեմ այն վայրկեանը՝ յորում ծածկուած ըլլայ թոյնը քու կերակուրներուդ մէջ. և ի՞նչպէս գիտնամ թէ որ այն ձեռքն է որ որոշուած է զայն քեզ ընձեռելու: Ճիշդ յաճախ, այն ատեն երբ սահմանուած է թշուառի մը մահը, անոր վրայ մեծագոյն հոգ ունենալու հրաման կ'ընդունիմ և գուժ ցուցնելու: Պարզ ծառայ մը, բանտերու պահապան մը, առանց գիտնալու, կը բերէ իրեն ըմպելիքի մը կամ դեղի մը մէջ մահը: Գիշերը կ'իջնէ, թշուառականը կը փչէ հոգին, և ապա չարաշուէր գաղտնիքներ իւր հետը կը խորասուզուին գերեզմաններու արահաւրաց մէջ:

Հռ. — Եւ ես իմ փախտեամբս քու վրադ պիտի ձգել տամ այս բարբարոսներուս վրէժխնդրութիւնը: Ոչ, Հենրիկոս, ոչ, երբեք:

Հեն. — Ըսէ ինձ, եղկելի, ըսէ. եթէ ես գահավիժի մը մէջ կորսուելու մօտ ըլլամ, և թէ զիս անկէ խլելու համար, դու բռնադատուիս կենացը վտանգով ներս նետուիլ, ըսէ ինձ... եղբայր, ի՞նչ կ'ընէիր:

Հռ. — Ի՞նչ կը հարցնես ինձ:

Հեն. — Պատասխանէ: Ի՞նչ կ'ընէիր:

Հռ. (յոշոշուած). — Բարեկամիս համար...

Հեն. — Եղբօ՞րդ համար:

Հռ. (զօրաւոր ձայնով). — Ա՛հ, կեցցէ երկինք, կամ կ'ազատէի զինքը, կամ կը մեռնէի իրեն հետ:

Հեն. (հոգոյոյ յուզումանք). — Ա՛հ, կեցցէ՛ երկինք, վասն զի իմ աղաղակս իսկ այս է: Կամ ազատել գրեզ, կամ մեռնիլ հետդ (մեծ կրից յուզումանք կը գրկուի): Ես, ըսեմ գրեթէ, այս ամբողջս տէրն եմ, և կրնամ ազատել կեանքդ՝ գուցէ առանց իմ վտանգի մէջ դընելու: Այլ թէ մերժես դու իմ օգնութիւնս, կ'իմացնեմ քեզ, բարեկամ, որ կ'երագես և կ'ապահովցնես իմ կործանումս քու դիմակալութեամբդ:

Հը. — Բայց չի ուզեր...

Հեն. — Եթէ դու ուզես ստիպել զիս մահդ նկատելու և թերևս դահիճդ ըլլալու, այն պտեն այլ ևս խորհուրդ պիտի չընդունիմ՝ բայց եթէ իմ յուսահատութենէս:

Հը. — Սակայն պարգաբանէ...

Հեն. — Շատ բարեկամներ, շատ հաւատարիմ ծառաներ ունիմ՝ որ ամէնքն ալ պիտի հնազանդին իմ իշխանական ձայնիս: Կ'երթամ ժողովելու զանոնք և կը դառնամ իրենց հետ՝ այս տեղերէս գրեզ կորզելու համար: Յայտնի է՝ թէ այս դիպուածիս մէջ վտանգն իմս էր և մահս անխուսափելի. այլ այսպիսով քու կը չեմ տեսներ, և չեմ՝ ես ինքնին՝ քու սպանողդ (երբարոյ վրայ):

Հը. (ստուգումն աղաղակաւ). — Ա՛հ, կեցիր, Հենրիկոս:

Հեն. — Թող զիս, Հոգիբարտ:

Հը. — Քու գոհողութեանդ վրայ մտածէ:

Հեն. — Երկբայական է այն՝ եթէ տեղի տաս, անհրաժեշտ՝ եթէ դիմակալես:

Հը. — Շատ վտանգներ կան:

Հեն. — Անխարդախ բարեկամութիւնն անոնց կը դիմագրաւէ, չի կըսէր զանոնք:

Հը. — Թշնամիներուն թիւն անչափ է:

Հեն. — Իրաւունքը ինձ խրախոյս կու տայ (երբարոյ վրայ):

Հը. — Կեցիր, հանդարտէ՛, միտ դիր:

Հեն. — Կամ ազատել գրեզ, կամ մեռնիլ:

Հը. — Լսէ՛ բարեկամին:

Հեն. — Կամ ազատել գրեզ, կամ մեռնիլ:

Հը. — Միտքդ դրամ՞ ես:

Հեն. — Ահաւասիկ պատասխանս (կը մերկանայ սուրբ):

Հը. (կրից յուզումն զեղումանք). — Ո՛հ չնաշխարհիկ մարդ, նախատիպ բարեկամութեան: Բաւ է այսչափ: Բաղդս ձեռքդ է, թոյր բազուկներուս մէջ, կեանքս ձեռքդ է: Քու զգացումներուդ չկրնար այլ ևս դիմանալ բաբախն սիրտս:

Հեն. (բարոյ զեղումանք հոգոյ). — Երկինք, շնորհակալ եմ քեզ՝ որ բարեկամս գտայ (կը նետուի իրարոյ զիբիլը. հաւանաօտ հանգիստ):

Հը. (դրդուելով). — Ո՛հ երկինք, մարդ կու գայ:

Հեն. (սրագապես բաժնուելով). — Այլ ևս զիբար չենք ձանջնար:

Տ Ե Ս Ի Լ Ե Օ Թ Վ Ե Ր Ո Ր Կ

ԳԱՒԹ, ԱՊԱ ԿՈՒՍՏԱՎ և ՎԵՐԻՆԵՐ

Գաւ. — Տէր, Հալլան-Քլավէրհալի պատուիրակը, զնաց արդէն դատատանի դահլիճը, և զիս քեզ կը զրկէ իմաց տալու համար:

Հեն. — Կուտամի: Առաջ եկուր (կ'եղև Կոռտալ): Հետեցէք ինձ (կը մեկնի):

Գաւ. — Ո՛րչափ գութս կը շարժեն:

ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն տեսարանն: Բնդհատորեան ժամանակ՝
կանրեղը պիտի վառուի:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԳՈՒՌԹ և ԳՈՐԳԻՆ Խառարակածեն

Գառ. — Եկուր, եկուր հետս, խեղճ Գաբրիէլ,
և արգարացի վշտիդ քիչ մը հանգիստ տուր:
Մեզ կը մնայ միայն իրեն ցաւակից ըլլալ. և
խորաններու առջև տարածուիլ, ինչպէս հիւ-
մայ ըրինք, աղերսելով իրեն համար երկնից
օգնութիւնը, եթէ անմեղ է:

Գար. — Տառապեալ: Հոն այժմիկ կը տարու-
բերի իւր բաղձն՝ որ գուցէ թէ բազմաթիւ հա-
կառակորդներու ձեռքն է, քան թէ դատա-
ւորի մը: Այն անձանօթը վերջապէս ինք-
զինքն յայտնեց: Իւր աչուքներուն մէջ կը կար-
դայիր սարսափը, և ճակատին վրայ՝ դժբաղդ-
ներուն զիրը:

Գառ. — Բայց յայտնի է՝ թէ ես շատ կը վա-
խեմ իրենց համար: Վայրկեանը և տեղը՝ յո-
րում յանկարծակիի բռնուեցան... այն ան-
ձանօթ անձին գալուտը... Սակայն, կ'աղա-
չեմ, Գաբրիէլ, խոհեմութիւն... Ա՛յլ ևս այս
բաներուս վրայ չխօսուիր՝ ոչ աջ ոչ ձախ...
Որ եթէ գիտնայիր... այս տեղերս՝ մինչև պա-
տերն անգամ՝ աչք և ականջ ունին:

Գար. — Ո՛հ, ինչ դժնդակ կեանք է այս,
անվտանգութեան և կասկածանքի մէջ...

մարդն ուրիշ մարդու դէմ դարանի նստած...
կը թուի ինձ՝ որ այս կերպով անտաններու
գազաններուն կը նմանին մարդիկ:
Գառ. — Սոսկալի՛ր ճշմարտութիւն: Ո՞վ մտիկ
կ'ընէ այդ խօսքերդ՝ առանց յուզուելու և ա-
ռանց սարսուելու (մտածուքեանց մէջ կ'ընկղմի):
Գաբրիէլ կու լայ իւր բազկապը մէջ:

Տ Ե Ս Ի Լ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՌԹ Կողովով, ՍԱՄՈՒԵԼ և ՍԱՀԱՊ

Յակ. (կողովը վար դնելով). — Ո՛հ, ահա ճիշդ
հոս է՝ այն իւր հրեշտակային զաւակովը:

Գուր լուռ և հանդարտ կեցիք, վասն զի իւր
տօնին համար բարեմաղթութիւնն ընելը՝ ինձ
կ'իյնայ (առաջ գալով):

Գառ. — Ո՞վ է հոն (դրդուելով):

Յակ. (վիսացած). — Է՛հ, ես եմ, մի՛ վախնար:

Գառ. — Ո՛հ, դժուր էք:

Գար. — Ո՛հ, ազնիւ Սամուէլ (բռնադատելով
իւր զիւրը):

Յակ. — Լռութիւն (ժակը դիրք մ'առնելով).
Անոր համար՝ որովհետև վասն զի աղուոր օր
մը՝ բաց անկէ ուրիշ չկայ, որուն մէջ կ'եր-
թայ, կ'ընթանայ և կը խօսին...

Գառ. — Անասուններն՝ ինչպէս դու ես...

Յակ. (կրկնելով). — Ինչպէս դու ես...

Գառ. — Բայց վերջապէս:

Գար. — Ժամանակը չէ այս:

Յակ. — Թողէք որ լմացնեմ: Այս ցնծութեան
օրուանս մէջ...

Գառ. (զայրացած). — Ի՛նչ ցնծութիւն, ի՛նչ
ցնծութիւն: Արդեօք զիպուածով կ'երևի՞ քեզ՝
որ իմ դէմքս ուրախութիւն ցուցնէ:

Յակ. — Յուցնէ՛ թէ չցուցնէ, հոգ չէ: Բարե-

մաղթութիւններուն մէջ՝ վերջին տեղը բռնողը՝ ճշմարտութիւնն է:

Դառ. — Եւ շատ անգամ ալ բնաւ չկայ: Բայց ինչո՞ւ, կ'աղաչեմ, կու գաս դու ձանձրացնելու զիս այսօր բարեմաղթութեամբ մը:

Յակ. — Ո՛հ, տոնելի շինուի. չե՞ս յիշեր՝ թէ այսօր ծննդեանդ օրն է:

Դառ. — Ոհ այո՛, ստոյգ է: Կ'երդնում Բաքոսի վրայ, որ աւելի ձախող օր չէր կրնար հանդիպիլ այն: Բայց եղեր է. ձեր բարեմաղթութիւնները սրտանց կ'ընդունիմ:

Գար. — Այո՛, սիրելի հայր, հարիւր տարի կարենաս ապրիլ:

Յակ. — (Է՛հ, կարծեմ մօտ ենք):

Սա՛մ. Կամապէս մենք ալ, կնքահայր, մենք ալ կը մաղթենք քեզ երկայն տարիներ՝ բոլոր իդձերուդ կատարմանը հետ մէկտեղ:

Դառ. — Դնորհակալ եմ, բարի Սամուէլ, յիբաւի շնորհակալ եմ քեզ: (Սամուէլը տեսնելով) Ի՞նչպէս, դու ալ հո՞ս ես, պզտըտիկ Սահակ:

Սա՛մ. — Կը համարէի՞ր՝ թէ պահպէր իւր կնքահօրը տօնին:

Սա՛մ. — Մանաւանդ թէ կանուխ ելայ այսօր՝ բարեմաղթութիւնս աղէկ սերտելու համար: Պապա՛, պէ՞տք է զուրցեմ:

Յակ. — Հարցնելու բան է: Հապա քեզ տեսնեմ, պատիւ ըրէ: (Խոտեկն իրեն կը յերազրէ) Իմ ազնիւ կնքահայրս...

Սա՛մ. — Իմ ազնիւ կնքահայրս... (կը կրկնէ վարանամ):

Յակ. — Ինք իրենդ առաջ տար:

Սա՛մ. — Ատուա՛ծ իմ. ներէ, բայց մոռցայ:

Յակ. — Յնդամ՛:

Սա՛մ (Դառի վագելով). — Սիրելի կնքահայր, կը մաղթեմ քեզ այս օրուան պէս հազար օրեր, և բոլոր ոգուովս և բոլոր սրտով կը սիրեմ գրեզ:

Յակ. (յարկացած). — Ոչ պարոն, ոչ, այդպէս չըսեր:

Դառ. — Այդպէս, այդպէս, իմ Սահակս, այդպէս աղէկ է: Այս չորս խօսքերս հաւասար արժէք ունին այն այլ և այլ դարձուածներուն՝ զոր գիւղի վարպետը կրնար սորվեցնել: Սրտի լեզուն պարզ է, և այս բառերս քու սրտէդ կու գան, այնպէս չէ՞, Սահակ:

Սա՛մ. — Այո՛, կնքահայրս. բուն սրտէս:

Դառ. — (Գրկելով զիւրը) Սիրուն գաւակ:

Սա՛մ. (Յակոբ դժկամակ՝ անկիւն մը յաշուած է). — Հայրիկ, ի՞նչ կ'ընես այն անկիւնը, ինչո՞ւ ետ քաշուեցար մնացիր:

Յակ. — Բայց քեզ ոչինչ բան կ'երևի: Այն երկու բարեմաղթութեան երեսներուն՝ որ պիտի արտասանէր՝ ամէն մէկուն տուքադ մը վճարեցի վարպետին. և ապուշիկը հագիւ տողի մը կէսն ըսաւ:

Սա՛մ. — Մի՛ սրգողիր, գալ տարուան համար կը ծառայէ: Գանք մեզի: Պարոն Գաւիթ, պէտք էս գիտնալ՝ որ կ'ուզենք հետդ ճաշել, և արդէն ասոր համար ամէն բան պատրաստեցինք: Կը տեսնե՞ս այն կողովը, պաշարը անոր մէջ է. և եթէ կը թողուս...

Դառ. — Բայց ի՞նչպէս. սիրելի բարեկամներս...

Յակ. — Այո, համշիրակ: Երէկ ես Սամուէլիս ըսի. Վաղը մեր տօնն է, և մեր սիրասուն Սահակին ծննդեանն օրն է: Կ'ուզենք զուարճանալ, խօսակցիլ, և ազահուստիւնը մէկդի ինտեղ: Ասոր համար է՛ որ Հալլան Գլապէրհաւը զէն այս ձամայիգայի շաքարօղիի շէշը բերի (աւելով զայն կողովէն):

Սա՛մ. — Այս ըմպելիք մըն է՛ որ քեզ շատ ախորժելի է, սիրելի կնքահայրս:

Դառ. — Ոհ իմ ազնիւ Յակոբս. ուրեմն այս ինձ համար է: Թողութիւն ըրէ՛ եթէ կոշտ կերպով ընդունեցայ զքեզ. սակայն դու ալ այս գէշ վայրկեանները կ'ընտրես...

Յակ. — Իրաւունք ունիս. և ուրիշ կողմանէ ալ ստոյգ է՝ որ այսպիսի օր մը՝ միշտ ինձ համար գրեթէ վտանգաւոր է, և իրաւ... տեսար որ թնդանովթնեղով սկսաւ. բայց, եթէ Աստուած ուզէ, աղէկ կը վերջանայ:

Դառ. — Այսպէս յուսալը օգտակար է: Սակայն ժամանակ պէտք չէ կորսնցնել. դուք երկուքդ ալ գնացէք սեղանը պատրաստելու և կարգի դնելու: Մի և նոյն ժամանակ Գաբրիէլ թող երթայ պարտէզ՝ սեղանին համար մեզ քիչ մը պտուղ ժողվելու՝ աղանդերի համար:

Գար. — Այո, սիրելի հայր:

Դառ. — Եւ ես մի և նոյն միջոցին ... Բայց, լուռ, մեծ սանդուղէն մարդ կու գայ:

Գար. — Ա՛հ, նորէն կը բերեն բանտարկեալը:

Դառ. — Գնացէք, գնացէք, գնացէք, գաւակներս, լաւ չէ որ զձեզ հօս տեսնեն: Դու ալ գնա, Գաբրիէլ, վասն զի այս բանտարկեալը շատ նեղութիւն կու տայ: Գնա՛, կը կրկնեմ, չեմ ուզեր...

Գար. — Կը հնազանդիմ. բայց եթէ երբեք ինձ պէտք ունենաս...

Դառ. — Ընելիքս գիտեմ:

Յակ. — Երթանք, Սամուէլ. Սահակ դու ալ եկուր (կը մեկնին խաւարակածէն, Գաբրիէլ կը մտնէ պարտեզ):

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Դ

Հենրիկոս, Կրեկոր Աշակազգեստով, թում գիւնտարներուն գրռիւր, որոնց մեջտեղը Հռիքարտոս, Կոշտաւ, և Վերիկնէ:

Կրեկ. — Պարոն Գնդապետ, կատարեցի այս բանտարկեալիս ձերբակալման վերաբերեալ բոլոր օրէնքները. հիմա զինքը կը յանձնեմ

քեզ: Ոճրին ծանրութիւնն, որուն համոզուած է, մասնաւորապէս քու խղճահար հսկողութիւնդ անոր վրայ կը հրաւիրէ: Կրնաս այժմիկ տանիլ տալ զինքը իւր բանտը, և զկուստավ՝ իրմէ բաժնուած՝ դնել տալ ուրիշ զընտանի մէջ:

Սպալ. (Կը շարժի պահապաններով դէպ ի բակ տարկեալը):

Հնէ. — Կեցիք: Արդէն բացայայտ պատուէրներ տուի՝ որ առջինը իմ բնակարանէս դուրս չեկնէ: Բանտերու շէնքին նորոգութիւնները՝ զոր կատարել կու տամ՝ կը ստիպեն զիս այս զգուշութիւնն ընելու: Նոյն իսկ իմ աչքս անոր վրայ պիտի ըլլայ, մի տարակուսիր: Կուտաւ թող փակուի աշտարակին մէջ:

Կոշ. — (Պիտի միանանք հոն՝ ուր դատուելու համար՝ պիտի գան նաև մեր թշնամիներն):

Կրեկ. — Թող այդպէս ըլլայ, սիրելի Հենրիկոս, միայն թէ յիշէք, որ երկու բանտարկեալներն ալ, և յատկապէս Հռիքարտոսը, քու պատասխանատուութեանդ տակն են:

Հռիք. — (Կամագուշկ առ Հենրիկոս) (Կը լսէս):

Հնէ. — (Պիտի ազատիս):

Կրեկ. — Ահա ձերբակալման և հարցափորձի տենագրութիւնը, իմ կնքովս ամրացած: Հանդերձ այսու, եթէ ընելու առարկութիւն մը ունիս...

Հնէ. — Ոչ, տէր. ամէն բան ի կարգի է: (Յետոյ կամագուշկ առ Հռիքարտ) (Հիմայ ինքը կը մեկնի):

Կրեկ. — Ա՛ն այս թուղթերս, և հազիւ թէ հասնիս ի Քլավէրհաւզ, տար զանոնք աւատառուին քարտուղարանը, որ յետոյ այս տեղեկագրին վրայ պիտի հաղորդէ ինձ իւր հրամանները (քարտուղարիկն):

Հնէ. — (Ի՞նչ կը լսեմ):

Կր. — Աճապարէ դարձդ, հրամաններն առ և եկուր գտիր զիս հոս:

Հեն. — (Ինչ կը մնայ):

Հռիթ. — (Սմենայն ինչ կորսուած է) (աչք մը
նետեղով իրեն վրայ):

Կրեկ. — Այո, Հենրիկոս, ստացած տեղեկու-
թիւններս՝ կը բռնադատեն զիս քանի մը օր
եւս մնալու այս դղեկիս մէջ, և սպասելու իմ
ուրիշ ընկերակիցներու, որոնք կը տեղափո-
խուին միշտ տեղոյ վրայ յանցաւորները դա-
տելու համար: Եւ այժմիկ կ'ուզեմ՝ օգուտ քա-
ղել կենալէս՝ մեր բերդին վիճակը ճանչնալու
համար, և առանձին կերպով՝ բանտերուն:

Հեն. — Այս վայրկենիս կրնայ երթցուիլ, և ե-
թէ կը ներեւս որ ես քեզ առաջնորդ ըլլամ...

Կրեկ. — Չէ, չէ, բաւական է ինձ քու պահա-
պանդ:

Հեն. — Ուրեմն քեզմէ միայն այնչափ ժամանակ
կը խնդրեմ՝ որ բաւական ըլլայ. բանտար-
կեալներու վերաբերեալ քանի մը պատուէրներ
տալու՝ և անյապաղ հետդ եմ: Գաւիթ, ա-
ռաջնորդէ իրեն:

Գառ. (Կ'ելլեն Կրեկորի ձեռ, և զիկնոշորները
կոչստովի ձեռ, որ՝ կրկնէն առաջ՝ կը գրկէ
զՀռիթարտ թարեկամութեան յոգնամբ):

Հեն. (Կարձ յուշրենէ մը վերջէն առ Հռիթարտ).
— Ախ, Հռիթարտոս:

Հռիթ. — Վիճակը ձգուեցաւ. ամենայն յոյս
կորսուած է: Խորհուրդէդ հրաժեշտ առ, ով
վեհանձն:

Հեն. — Հրաժեշտ առնուլ՝ երբ ստուգութեամբ գի-
տեմ որ մեռնելու վրայ ես: Բայց չէ՞ս տես-
ներ որ կ'ուզեն ասպհովցնել քու կորուստդ:
Այլ օ՛ն և օն երկիրք. քանի ես կենդանի եմ, պիտի
չյաջողին: Գեո տակալին գորութիւն ունիմ,
և ձեռք առնուլ շատ միջոցներ: Սմենայն ինչ
պիտի փորձեմ, յայտ, ամենայն ինչ, թէպէտ և
հարկ ըլլայ թաղուիլ այս դղեկիս փլատակնե-
րուն տակ:

Հռիթ. — Բայց թէ որ այս վայրկենիս...

Հեն. — Պէտք է որ զքեզ թողում... Կը սպա-
սեն ինձ... կասկած չտանք: Սակայն լաւ քան-
դակէ սրտիդ մէջ խոտմունքս՝ զոր կ'ընեմ:
Այս գիշեր, կամ պիտի ազատեմ զքեզ, կամ
պիտի մեռնիմք միասին: Մնաս բարով, եղ-
բայր (կ'ելլեն շտապաւ մեծ սակողիկ):

Հռիթ. — Մեծանոցի բարեկամ... պիտի չյաջո-
ղիս վրիպցնել հարուածը՝ որ կը սպառնայ
իմ օրերուս: Հայրենեացս և ազգականներու
սէրը, կամ մանաւանդ թէ զիս հալածող բաղ-
դը, ուզեց որ ես տեսնեմ՝ վերստին այս ա-
փունքս՝ միայն աւելի եւս զարհուրելի ընելու
համար իմ կատարածս, և շրջապատելու զայն
նոր սարսափներով: Ո՞հ դառն վիճակ (ընկ-
նուած կ'իյնայ արքայի մը վրայ):

Տ Ե Ս Ի Լ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ԳԱՔՐԻԵԼ Պարտիզիկ, և Վերիլեն:

Գաք. (տազնւարով). — Ճիշդ ահա նա... միայն
է... ամենայն ինչ կարծես յաջող է:

Հռիթ. (Կ'ելլեն խոր վնաստըրեալ, կը շարժի
մեկնելու՝ ծանրաբայ):

Գաք. — (Սնըքան յուզուած եմ... այնպէս լե-
ցուած եմ իմ մտածութեամբս, որ հազիւ
կրնամ խօսիլ հետք. բայց սակայն ստիպուած
եմ): Տէ՛ր իմ... (ցած ձայնով և դողդոջուն)
Տէ՛ր իմ...

Հռիթ. — Գաքրիէ՛լ:

Գաք. — Ինչո՞ւ այս տեղէս կ'երթաս: Ուզածիդ
պէս կրնաս իսկ հոս մնալ: Գնդապետն այս-
պէս հրամայած է. հաճոյական բան մըն է ինձ
զայն քեզ իմացնելը:

Հռիթ. — Շնորհակալ եմ ինձ ցուցած սիրովդ,
ագնիւ տղայ:

Գար. — Եւ ըսեմ քեզ՝ որ այսքան մտադրու-
թիւնը՝ զոր կը տեսնեմ թէ պարոն Գնդա-
պետը կը ցուցնէ վրագ, կը սրտապնդեն զիս
և կը մխիթարեն, վասն զի ենթագրել կու-
տան ինձ՝ թէ և ոչ զքեզ յանցաւոր կը հա-
մարի:

Հւիթ. — Ճշմարիտ է, այն ազնիւ հոգին անձ-
նամատոյց կ'ըլլայ բանտարկութեանս արհա-
ւիրքը ամոքելու: Բայց ինչ օգուտ, սահմա-
նուած է իմ բաղձս. և, ոչ անոր ոչ ուրիշնե-
րու կարելի պիտի ըլլայ ազատելու զիս թըշ-
նամիներուս վրէժխնդրութենէն, և մանաւանդ
նենգաւոր Քլավէրհաւզի Ռայմոնտէն:

Գար. — Անոր վրայ չեմ խօսիր... սակայն ու-
րիշները...

Հւիթ. — Ի՞նչ ըսել կ'ուզես:

Գար. — Ուրիշները կրնան...

Հւիթ. — Ի՞նչ բան:

Գար. — Առանց իրեն գիտնալուն...

Հւիթ. — Հնապա, լմնցուր:

Գար. — (Շունչս կը հատնի):

Հւիթ. — Դու կը դողաս տերեւի մը պէս:

Գար. — Եւ սակայն բարի գործ մը մտածեցի:

Հւիթ. — Ի՞նչ գործ... բարձրացուր աշուրներդ,
ինձ նայէ:

Գար. — (Ո՛հ, ահա այն նայուածքը՝ որ դար-
ձաւ գորովալից իմ օրհասական հօրաքրոջս
անկողնին):

Հւիթ. — (Ի՞նչպէս կը փայլի այն աչքը: Եւ
ինչ խորհրդաւոր զգացում կ'իմանամ միշտ՝
երբ կը նայիմ այս պատանուոյս վրայ):

Գար. — (Արիացիր, Գաբրիէլ, սիրտ առ):

Հւիթ. — Գաբրիէլ, ձեռքդ տուր ինձ:

Գար. (համբարեղով զայն խանդով). — Ո՛հ բա-
րերար ձեռք, դու կը վառես զիս գործոյն,
դու կ'ամրապնդես զիս իմ խորհուրդիս մէջ:

Հւիթ. — Բայց հնապա, մի՛ թողուր զիս այլ ևս
տարակուսած, խօսէ:

Գար. — Կը խօսիմ... կը խօսիմ... բայց կա-
մաց... հոս անկիւն մը: Այս տեղս պէտք է
գործել բարին՝ ինչպէս որ կը գործեն շարը
ուրիշ տեղեր. գաղտագողի և ամենայն ծած-
կութեամբ:

Հւիթ. — (Ի՞նչպէս կը մոգէ զիս իւր ձայնը):

Գար. — Ուշ է: Գղեկին դռներն ութին կը փա-
կուին: Նահանջին խուլըտիւնը պիտի իմա-
ցնէ քեզ այս վայրկեանս: Այն ատեն իմ ազ-
նիւ պապս, այն ծերը, որ ես սովորութիւն
ունիմ հայր կանչելու, կու գայ բանալիները
յանձնելու պարոն Գնդապետին, և յետոյ կը
քաշուի իւր բնակարանը: Երբ ամէնքը... մը-
տած ըլլան... դու կրնաս հոս դառնալ:

Հւիթ. — Այս սրահի՞ս մէջ. ի՞նչ ընելու համար:

Գար. — Ես քիչ մ'առաջ պարտիզին մէջ էի:
Ահա ճիշդ հոն խորը պատը՝ որ կը միանայ
բերդին այս թևիս հետ: Գժբաղութենէդ շար-
ժած, ինքիրենս մտածելու վրայ էի այն հա-
ճոյքին՝ որ պէտք է զգայ մարդ՝ երբ կարող
է անմեղի մը ազատութեան ձեռք կարկառել:
Այսպէս անձամբ անձին խօսելով... մեքենա-
պէս կ'երթայի դէպ՝ այն փոքր տնակը՝ զոր
պարոն Գնդապետը շինել կու տայ կաղամա-
խիներուն ճամբուն գլուխը: Հոն հասնելով,
տեսայ որ գործաւորներէն մին՝ պատին մէջ
բացուած ծակէ մը դուրս կ'ելնէր՝ տախտակա-
մածին ցիցերը գետինը մխելու համար: Ո՛հ,
եթէ դժբաղդ մը (ինքիրենս իսկոյն աղաղա-
կեցի), եթէ դժբաղդ բանտարկեալ մը կարե-
նայ հասնիլ մինչեւ հոս...

Հւիթ. (ակառնայ յուզմամբ). — Ա՛խ, Գաբրիէլ:

Գար. — Լու՛է, կ'աղաչեմ (ձեռքիւն մեկը բերնիկ
վրայ դնելով): Երախտագիտութիւնս քեզ
ցուցնելու փափազին դէմ չկրցայ դնել: Սա-
կայն եթէ կասկածի տակ իյնամ, կրնամ իմ
ծեր հօրս ոչ սակաւ վիշտ պատճառել: Եւ ըս-

տոյգն ըսելով, որչափ որ իմ գուլթս կը շարժես, բան մը չէի ըսեր քեզ, եթէ ապահով եղած չըլլայի, որ ոչ որ վտանգի մէջ կ'իյնայ ամբաստանուելու քու փախտեանդ համար: Այսու՝ պիտի չգիտնանք բնաւ ինչ միջոցով խոյս տուած ըլլալդ. և եթէ յաջողիմ ազատելու գրեզ, այս՝ իմ կենացս գեղեցկագոյն օրը պիտի ըլլայ:

Հւիթ. — Ո՛հ գերաշխարհիկ մանուկ. վեհանձնութիւնդ... (Ներսէսէ քերէշ շշուկ):

Գար. — Մարդ կու գայ... Անդին... անդին կեցիր... Լուս... հետս ալ մի խօսիր... Սամուէլն է... Ելիր ասկէ... բայց լուս... կը կրկնեմ:

Հւիթ. (շարժմանը շնորհակալ ըլլալով Գարրիէլէի, շատ մը կը մեկնի):

Գար. — Ո՛հ ի՞նչպէս խոսոված եմ... Զիտ հանդարտեցնելու պէտք ունիմ: (Կ'երբայ դեպ ի հասարակածը՝ հագին սակնէրով իւր խռովորիւնը) Ո՞վ կայ հոն... Ո՞հ ազնիւ Սամուէլ, դ՞ն էս:

Տ Ե Ս Ի Լ Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Գ

ՍԱՄՈՒԷԼ և ՎԵՐԻՆԵ

Սամ. — Այո՛, Գարրիէլ, ես եմ:
Գար. — Իմ պապս ո՞ր է: Եւ ո՞ր է հայրդ:
Սամ. — Հայրս Գաւթին հետ է, որ գնաց ամբողջին դռները փակելու, և ճամբուն վրայ, այցելելու նաեւ գինետունը՝ ունեցած լաւագոյն գինիէն՝ կերակուրին բերելու համար: Նահանջէն վերջը՝ անոնց դառնալը պիտի տեսնենք: Բայց այս ի՞նչ ըսել է, իմ սիրուն Գարրիէլս, որ ձեռքդ կը դողայ, և ժամանակէ մը ի վեր, սովորականէն աւելի գունամթափ ես դէմքով:

Գար. — Է՛հ, ի՞նչ կ'ուզես: Երեք շաբաթ է միայն՝ որ այս տեղս կը բնակիմ... Հոս ուրիշ բան չեն տեսնուիր՝ բայց եթէ թշուառներ. և իմ սիրտս... (պարծենալու համար չէ...)
Իմ սիրտս յուզուած է անոնց վրայ: Ո՛հ, շատ ողբալի կ'ըլլայի, եթէ այս դղեկիս մէջ բնակէի երկար ժամանակ:

Սամ. — Ճիշդ էս միշտ նոյնը իմ հօրս կ'ըսեմ, որ դու այս արուեստիս համար եղած չես:

Գար. — Ո՛հ, արդարեւ իրաւամբ կը դատես (ձեռքէն քսնելով և հետը ցած ձայնով խօսելով) Երեւակայէ... որ երբ այս խեղճ բանտարկեալները կը տեսնեմ այլազունած, ահաբեկ... հոն խորը... այն բանտերուն մէջ շղթայակապ... սարսուռ կու գայ վրաս անոնց վրայ մտածելով:

Սամ. — Խեղճեր: Կարծես թէ կը տեսնեմ զերենք:

Գար. — Կ'երզնում քեզ, Սամուէլ... որ այն ատեն կ'իմանամ տեսակ մը զրգիտ...

Սամ. — Սարսուռ մը սոկրներու մէջ, է՛հ: Կը հաւատամ, կը հաւատամ:

Գար. — Համառօտ ըսելով... Եթէ էս յարմար առիթը գտնէի...

Սամ. — Ի՞նչ կ'ընէիր...

Գար. — Կը բանայի իրենց դուռը որ փախչին:

Սամ. (եւ ետ երբայրով տակնակ աղաղակաւ).
— Ի՞նչ բան ըսիր: Ո՛հ երկինք: Ի՞նչ է որ լսեցի:

Գար. — Է՛հ չէ... լուսութիւն... Այնպէս՝ բան մը ըսելու համար ըսի...

Սամ. — Է՛հ, եղբայր, վայ թէ որ ուրիշ կերպով մտածես: Ո՛հ աղէկ կը տեսնուի, որ արուեստիդ մէջ նորընծայ ես: Վայ է, վայ է քեզ եթէ մէկը լսած ըլլայ (չորս կողմը նայելով երկիշղայից շրջահայեցութեանը՝ կը տեսնէ գէներիկոս). Երկինք, ահա Գնդապէ-

տը: Արդեօք լսած է: Նաեւ ես ալ կը կործանէի:

Տ Ե Ս Ի Լ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ

ՀՆԵՐԻԿՈՍ մեծ սանդղին, վերինը

Հեն. (կանգ կ'առնու ներքո տղայոց մէջ, և պիշ պիշ կը նայի Գարրիկի). — (Ահաւասիկ նա: Երթալով սրչափ աչքիս աւելի սիրելի կ'ըլլայ):

Գար. — (Նա ինձ կը նայի, և ի՛նչպէս սեւ-աած: Վայ ինձ, արդեօք իրեն ըսե՞ր է բանտարկեալը...):

Սալ. (դողդոջու). — (Ա՛հ, ամէն բան լսեր է: Կորսուած ենք առանց թողութեան):

Հեն. — (Կորսոցնելու ժամանակ չկայ, փութով կ'երթամ ապահովալու՝ թէ արդեօք այս տըղուս տեղեկութիւնը ճշմարիտ և ուղի՞ղ է, և թէ այն ծակը պատին մէջ... (երբայու Վրայ):

Գար. — (Հետս չխօսիր, և կ'երթայ: Կը դռ դամ):

Սալ. — (Զնայեցաւ ինձ: Ոգի կ'առնում):

Հեն. (Որ կանգ առած է կես քամբան, կը նայի նորին Գարրիկի, յետոյ կը դառնայ և կը մտնուայ Սառնուկի՝ որ նորին կը վսիխնայ և կը դողայ). — Սամուէլ... ես զքեզ կը ճանչնամ...:

Սալ. — (Ամէն բան լսեր է, ամէն բան):

Գար. — (Ի՛նչ մահացու անտուգութիւն):

Հեն. (Միկ ձեռքը անոր ուսին իրայ դնելով). — Դու ազնիւ տղայ մըն ես:

Սալ. — (Ճշմարիտ է ըսածը), (այքի տակին անոր նայելով):

Հեն. — Սիրուն գաւակ մը...

Սալ. — Է՛հ, է՛հ կը շանամ ըլլալ:

Գար. — (Կը յուսամ թէ խաբուեր եմ):
Հեն. — Եւ մեծ ապագայ մը ունեցող:

Սալ. — Եւ ամէն բանէն վեր՝ գաղտնապահ:

Կը վախնամ միշտ և բնաւ չեմ խօսիր:

Հեն. — Քայլ ես, ամենաքաջ (կը մտնուայ Գարրիկի):

Սալ. — (Շունչս մարմնոյս մէջ մը դառնայ):

Հեն. — Գաբրիէլ, կ'ախորժիմ տեսնելով՝ որ բարեկամներուդ ընտրութեանը մէջ՝ այնքան խոհական ես: Համարէ զիս ալ անոնցմէ մէկը: Բարի սիրտ մ'ունիս, և արժանի ես ամենայն իրաւամբ արժանաւոր պապուդ սիրոյն, և իմ սքանչացմանս: Գաբրիէլ, մնաս բարով (այս խօսքերես յետոյ՝ կ'կրկն խորեկ՝ պարտեզ երբայով: Գարրիկ և Սառնուկ ետեւէն կը նային, և երբ կը մեկնի, երկուքն ալ կը հանդարտին և կ'ոչրախաւան):

Գար. — (Բան մը չգիտեր, բան մը չգիտեր. ինքզինքս կը գտնեմ):

Սալ. — Աղէկ, շատ աղէկ: Բան մը չիմացաւ: Հոս ձեռքդ տուր, Գաբրիէլ. որ կարծես՝ թէ նոր աշխարհ եկայ:

Գար. — Վախնալու շատ հակամէտ ես: Ես՝ ուրիշ կողմանէ, մեր խօսքին դառնալով, չեմ տեսներ որ մեծ չարիք մը պատահի, եթէ բանտարկեալ մը խոյս տայ:

Սալ. — Չե՞ս տեսներ զայն: Ես ըսեմ: Քու հայրդ կը կործանի:

Գար. — Ի՛նչպէս (վեր ցատկելով):

Սալ. — Չե՞ս հաւատար:

Գար. — Այլ եթէ այս բանս իմ հօրս անգիտութեամբը հանդիպի:

Սալ. — Ինչ կերպով ալ ըլլայ՝ պաշտօնը կը կորսնցնէ:

Գար. — (Եղիւկ ինձ): Սակայն եթէ բանտարկեալը իմ հօրս պահպանութեանը տակ չըլլայ:

Սալ. — Ի՛նչ երագ կը տեսնես. ամէնքը, եղ-

բայր, ամէնքն ալ իւր պահպանութեանը տակ են: Բանտարկեալ մը՝ որ միանգամ վանդակեայ դռնէն անցաւ, պարոն Դաւիթը կենօք չափ անոր պատասխանատու է:

Գար. (տակնակ տաղաղակաւ). — Կենօք չափ: (Ի՞նչ բան ըրի):

Սաւ. — Բայց միթէ չէ՞ս զիտեր, որ երեք տարի առաջ՝ այս պատերուս մէջ հանդիպեցաւ քեզմէ հիմա ենթադրուած դէպքը, և թէ՛ թէ՛ Գնդապետը և թէ՛ պահապանը՝ որ երկուքն ալ բոլորովին անմեղ էին...

Գար. — Լմնցուր:

Սաւ. — Սոսկա՛:

Գար. — Սակայն լմնցուր:

Սաւ. — Չանոնք կախաղան հանեցին:

Գար. (խորշած ձայնով). — Ո՛հ:

Սաւ. — Եւ եթէ տեսած ըլլայիր պահապանը, որ խեղճ ալևոր մըն էր...

Գար. (գրեթէ մարեկով). — Բաւական է, Սաւուէլ, բաւական է:

Սաւ. — Դահճին ձեռքը... կացինը գլխուն վըրայ... որ...

Գար. (դողման և վշտի ձայնով). — Բաւ է, Սաւուէլ, բաւ է այսչափ: (Ի՞նչ ըրի Աստուած իմ, ի՞նչ ըրի) (դանդաղելով կ'երրայ կը կարրուի իւր պատուէն քիկնարոտիկ):

Սաւ. — Գաբրիէլ, կ'ըսեմ, Գաբրիէլ... Ի՞նչ բան է այս:

Գար. — Ոչինչ... ոչինչ: (Քող մը ունիմ աչքերուս վըրայ. մահը սրտիս մէջ է):

Սաւ. — (Հիմա կը զղջամ՝ այս պատմութիւնը իրեն պատմելու):

Գար. (ոյժ տալով). — Պիտի չփախչի, կեցցէ՛ երկինք, պիտի չփախչի: Բայց դարմանն քնչպէս ընել... (կը շտաի նահանգիկն զարնելը այլ և այլ տեղեր, և կը դառնան պահակապանը) Նահանջը կը զարնեն: Պիտի ստիպուիմ

հոսկէ հեռանալու... և բանտարկեալը... արիւթիւն. ամէն բան հօրս ըսեմ (երբարոշ վրայ) Ո՛հ երկինք. Գնդապետը կը դառնայ: Չեմ կրնար այլ ևս շարժիլ: Երկի՛նք, օգնէ ինձ, գթացիր):

Տ Ե Ս Ի Լ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Գ

ՀԻՆՐԻԿՈՍ և ՎԵՐԻՆՔ, ապա ԴԱԻԹ, ՅԱԿՈՐ, զիկնորաց խոշոր մը, և գորականը վառուած շապտերկերով):

Հեն. (կը մտնէ արագութեամբ). — (Ամենայն ինչ ճշմարիտ է, ամենայն ինչ ուղիղ է՝ ինչպէս որ պատմեց Գաբրիէլ: Փախուտը ապահով է, բարեկամը ազատ է և փրկուած):

Գար. (կը տեսնեմ անոր շարժիլը... նորէն ինձ կը նայի... ա՛հ, ահա՛ հայրս):

Դաւ. — Ահաւասիկ, պարոն Գնդապետ, ամբողջին բանալիները:

Հեն. (կ'առնու զանունը և կը դնէ ստոյիկիկն վըրայ):

Դաւ. — Կը տիրէ խոր խաղաղութիւն բանտերու բնակարանին մէջ: Գղեկին մէջ ուրիշ օտար չմնաց՝ բայց եթէ համշիրակս Յակոբ իւր ընտանիքովը:

Հեն. — Ս՛հ, կտրիճ Յակոբը հո՞ս է:

Յակ. — Այո, տէր, հոգուով և մարմնով:

Հեն. — (Անխոհեմ, ես մոռցեր էի...):

Գար. (գաղտնի ուղեկով ելնել). — Ո՛հ եթէ կարենայի պարտէզ դառնալ, դարանի կը նըստէի...):

Դաւ. (արգիլելով զիկնը). — Եւ դու սուր կ'երթաս. սպասէ ինձ որդեակ իմ:

Հեն. — Յակոբ, Գէորգ ընկերդ ալ դղեկին մէջնէ:

Յակ. — Այո, տէր:

Հեն. — (Գէորգ աւելի արթուն և քաջասիրտ է): Գնա նոյնհետայն պատուիրէ՛ իրեն՝ որ նաւա- կովը երթայ ծովափունքը՝ աւերակներուն ե- տև, ուստի քիչ ատենէն պիտի մեկնի հրա- մանովս:

Յակ. — (Խեղճ Գէորգն ընթրիքը կորսնցուց): Կ'երթամ շուտ մը: (Ինծի համար աղէկ՝ որ Գէորգը ընտրեց): Սակայն, տէր, զրկէ՛ մէկը որ ինձ դուռը բանայ, ապա թէ ոչ...:

Հեն. — Գաւթ, ահա ծովագերբի դրան բանալին: Հետն ընկերէ, և յետոյ ինձ դարձուի:

Դաւ. — Կը ծառայեմ՝ իսկոյն: Պարոն Գնդա- պետ, ինձ և որդւոյս այլ ևս պէտք ունի՞ս:

Հեն. — Ոչ, դուք ամէնքդ ալ քաշուեցէք:

Դաւ. — Եկուր, Գաբրիէլ:

Գաբ. — (Այս դռնէս պիտի չբաժնուիմ):

Ամենքն. — Գիշեր բարի:

Գաբ. — (Իմ խեղճ հայրս, ա՛հ, ուր էր թէ մեռ- նէի. բայց բանտարկեալը պիտի չփախչի): (Հեկրիկոսէն զատ առեկըր կը մեկնիև հա- սարակածէ: Խոր գիշեր է: Թատրը խառա- րամած է, ձեղունիև գերակնեղև կախուած լապտերով մը միայն լուսաւորուած ըղայտի):

Տ Ե Ս Ի Լ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Պ

ՀԵՆՐԻԿՈՍ, ապա ՀՈՒՔԱՐՏՈՍ մեծ լոյիկի մը
մեջ փարքուած:

Հեն. — Եկուր, Հոնքարտոս: Շղթաներդ խոր- տակելու վայրկեանը կը մտնենայ:

Հռիթ. — Ո՛հ Հենրիկոս, քու վիճակդ զիս դող կը հանէ:

Հեն. — Անոր վրայ չմտածենք: Արդէն Քլա- վերհաւզէն նոր արդի ստացած լուրերովս, քիչ մ'առաջ կրնայի ես ուրախացնել զքեզ գե-

ղեկափայլ յոյսերով: Գնա, Հոնքարտ, միա- ցիր ընկերներուդ հետ, ցուցուր զքեզ հպա- տակներուդ. և քու տեսիլդ յաղթանակի նշանն ըլլայ:

Հռիթ. — Իմ արգարամէտ դատս կ'առաջնորդէ ինձ, և բարեկամութիւնը վեհագոյն կ'ընէ զիս իմ անձէս: Թէ յաղթեմ, թէ յաղթուիմ, դու պիտի ըլլաս միշտ իմ ազատարարս:

Հեն. — Հազու թէ ելնես պատիւն ծակէն, դար- ձիր աջակողմը, և հասիր մինչև հին ամրո- ցին աւերակներուն: Հոն պիտի գտնես նաւա- վար մը իւր մակոյկովը: Հիմա հոն պէտք է հասած ըլլայ: Գէորգն է, որ այս պատուէրս կը դնէ լիովին տնօրէնութեանդ տակ (կոչ տայ իրեն յուշը մը): Ա՛ս այս գէնքերս. սա- կայն չգործածես՝ բայց եթէ վերջին վտան- գին. ա՛ռ նաեւ այս ոսկիս, ա՛ռ, կ'ըսեմ: Ա- մէն բան պէտք է նախատեսել: Ալ ուրիշ բան չկայ, գնա՛:

Հռիթ. — Բարեկամներու մէջէն դիւցանգն:

Հեն. — Գրկէ զիս անգամ մ'ալ:

Հռիթ. — Եթէ վերջինն ըլլայ:

Հեն. — Երկինք պիտի միացնէ զմեզ:

Հռիթ. — Հենրիկո՛ս:

Հեն. — Հոնքարտո՛ս (կը գրկուիև մեծ յուզ- մամբ, և Հռիթարտ կ'երևէ): Ո՛հ Աստուած իմ, կեանքս առ. բայց եթէ բարեկամս...: — Ահա մտնեցաւ նա Գաւթի տանը... ծո՛ք, վասն զի կրնան նշմարել զքեզ այն սպտուհանէն... այդպէս... ա՛հ անցաւ... հասաւ ահա վան- դակեայ դրան... կը բանայ գայն... հիմա իւր փախուտը ապահով է: (Ներսէև ուժգին ոտնուծայն կը լսուի): Երկինք, ի՛նչ շառաչ է այս:

Տ Ե Ս Ի Լ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

ԳԱՔՐԻԷԼ և ՎԵՐԻՆԵ:

- Գար. (Ներսէս). — Կեցիր, կեցիր:
 Հեն. — Եւ ուտա՞ր կը փրթի այս աղաղակս:
 Գար. (վազկերպ). — Կեցիր, կեցիր:
 Հեն. — Գաբբիէլ...
 Գար. — Ա՛հ, պարոն Գնդապետ... օգնութիւն:
 Բերդէն բանտարկեալ մը դուրս կ'ելնէ: Օգ-
 նութիւն:
 Հեն. — Ի՞նչ կ'ըսես, ի՞նչ կ'ընես:
 Գար. — Անդիէն... անդիէն կը փախչի... ըն-
 թանանք... Ո՞հ երկինք, անա վանդակեայ
 դուռը կը փակէ (կը ըսէ Վանդակեայ դրամ
 փակելը):
 Հեն. — (Ազատեցաւ, ազատեցաւ):
 Գար. — Ախ, իմ հայրս կորսուած է: Զէ՛նք ա-
 ուէք:
 Հեն. — Երկնից անուամբը:
 Գար. (ի ծռելը). — Իմ հայրս. ազատէ իմ հայրս:
 Հեն. — Աղաղակը զմեզ կը կորսնցնէ:
 Գար. (զարնուրած՝ եղնկերպ). — Ի՛նչ կը լսեմ.
 դո՛ւ ևս համամիտ:
 Հեն. — Կ'աղաչեմ:
 Գար. — Մտիկ չեմ ըներ քեզ... ի՛մ հայրս...
 զէ՛նք առէք... ի՛մ հայրս (զանգակիկն իս-
 խուած շրթն կը տեսնէ) Ո՞հ երկինք, շնոր-
 հակալ իմ քեզ, նա պիտի չփախչի: (Կը խո-
 յանայ ձևը կը կոչուի):
 Հեն. — Կեցիր... ան կեցիր:
 Գար. (ձևը կը կոչուի). — Սպաննէ՛ զիս, բայց չեմ
 թողուր:
 Հեն. — Նենգող, դողա՛ (կը ըսէ ինչ հրացանի
 հարուածներ և շշուկ ներսէն) Ա՛խ, մատ-
 նուեցանք:

Գար. (Հենրիկոսի բազկացը մէջ). — Ազատե-
ցի՛ հայրս:

Տ Ե Ս Ի Լ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

ԿՐԵԿՈՐ, ԹՈՄ, ԳԱԻԹ, ՍԱՐՈՒԷԼ, ՀՈՒԲԱՐՏ,
ՅԱՅՈՐ, ԶՕՐԱԿԱՆԵՐ, և ՎԵՐԻՆԵ:

- Կրկ. — Աղմուկը դադրի: Գուք ամենքդ ալ
 սիրտ առէք: Արդէն դղեակը զօրականներէ
 պաշարուած էր, և բանտարկեալը փախչիլ չէր
 կրնար: Ամէն բան գիտէի:
 Հեն. — (Ո՞հ բաղդ):
 Կրկ. (Հենրիկոսի առջևէն սեղնելով). — Այո,
 ամենահաւատարիմ պարոն Գնդապետ, ամէն
 բան իմացայ: Ահա բանտարկեալը: (Կ'ելնէ
 Հռիքարտ Զօրականաց մէջ):
 Գար. — (Ո՞հ երկինք. հիմա կը դողամ՝ իբրեւ
 թէ ոճիր մը գործած ըլլայի):
 Կրկ. — Երկար ժամանակէ հետէ, պարոն Գըն-
 դապետ, կը կասկածէր վրադ Ռայմոնտ, և
 մինչդեռ խոտվարարները կը շարժին և յա-
 ւակնութեամբ կը փորձեն զինքը կործանել
 և բնաջինջ ընել, շատ կարեւոր է իրեն՝ որ
 ճանչնայ իւր մարդիկը՝ որոնցմէ ստիպուած է
 ծառայութիւն ընդունիլ: Արդէն գիտէինք՝
 թէ Հռիքարտոս երբեմն քու սիրելագոյն բա-
 րեկամդ էր, և այլ ևս չէինք տարակուսիր որ
 այս պարագան... ի հեճուիս քու պարտքիդ,
 յաղթանակել չտար քու հրաբորբոք զգացում-
 ներուդ:
 Հեն. — Արդարապէս դատեցին զիս, և կը պար-
 ծիմ անոր վրայ: Կը ցաւիմ միայն՝ որ չի
 կրցայ զինքն ազատել:
 Կրկեր. — Ես գուշակած էի այդ դիտաւորու-
 թիւնդ: Ճանչցիր հիմա յիս Քիզիկֆուլդուսի

Կրեկորը, հանրային այցելու և մտերիմ բարեկամ՝ այս երկիրներուս աւատառու Ռայմոնտ կոմսին, որ կու տայ ինձ այս բերդիս առ ժամանակեայ հրամանատարութիւնը, պատուէրով՝ որ հաղորդեմ ամէնուն քու յայտնի հրաժարականդ:

Հռիթ. — Գժբա՛ղդ Հենրիկոս:

Կրեկ. — Գալով եղբրան՝ զոր գործեցիր, խորհրդեան կ'իյնայ վճիռն արձկելը: Հիմակուհի մայ, այս վայրկենէս դու իմ բանտարկեալս ես և կը հրամայեմ որ սուրդ յանձնես ինձ: (Թում կ'ընդունի զայն) Եւ քեզ, առաքինի պատանեակ, քեզ հրապարակաւ իմ հաճութեանս վկայութիւնը կու տամ:

Գար. — Ի՞նձ: Ո՛հ տէր:

Հռիթ. — (Ի՞նչպէս. Գաբրիէլ զիս մատներ է):

Կրեկ. — Դու մեզ մեծ ծառայութիւն մ'ըրիր: Եթէ ես կոմսին դաւն անգիտանայի, քեզ միայն պարտական պիտի ըլլայի այս հաագին յանցաւորիս ձերբակալումը: Պիտի հրատարակեմ քու այս գեղեցիկ գործդ, և կը խոստանամ, որ պիտի վարձատրուի ինչպէս արժան է՝ քու հաւատարմութիւնդ:

Հռիթ. — Ա՛հ, Գաբրիէլ, դու մատնեցիր զիս:

Հեն. — (Մատնիչ վատշուէր):

Կրեկ. — Դու, պարոն կոմս, այս գիշեր իսկ պիտի տարուես ի Քլավէրհաւզ, և հոն համար պիտի տա ընթացքդ: Հիմակուհի մայ բընակարանդ քու բանտը ըլլայ (կը մեկնի):

Հեն. — Գիտեմ, թէ ինչ ճակատագիր պահուած է ինձ:

Հռիթ. — Հենրիկոս, գրկէ զիս:

Հեն. — Մնաս բարով, Հոկթարտոս: Կ'ուզէի գքեզ ազատել. հիմա մատնակից պիտի ըլլամ քու բաղդիդ (կ'եղնեմ):

Հ Ա Ն Դ Է Ս Ե Ր Ր Ո Ր Դ

Նախասենեակ գորացի ոճով բանտերու: Տեւարանին հակադիր կողմերը շրջապատուած են բանտերով, որոնց դռները կը տեսնուին հաստ փակադակներով կղպուած:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԳԱԲՐԻԷԼ միայն: Վարագորչին բարձրանալուն՝ ստոյի մը քով նստած պիտի ըլլայ: Քիչ մը ժամանակուսակ հաւար քուռեկ բռնուած ըլլալը կ'երևի. բայց միակզանայն խռոված կը քուռի զարնուրի կերպով մը: Ստոյին վրայ վառուած կանրեղ մը կայ, և երկու ստոյանակներ, և միւս կողմը՝ ստոյիկի մը վրայ՝ գրեղու կարնուրը պիտի գտնուին:

Գար. (երագելով). — Ո՛հ երկինք. կեցիք: Հոկթարտոս է, իմ բարեբարս է: (Կը զարնեմ դուռը խորեկ և Գաբրիէլ կ'արքնուայ վեր ցատկերով) Ա՛հ, ո՛ւր եմ ես: Ի՞նչ ահաւոր երագ (նորեկ կը զարնուի) Դուռը զարկին. հայրս է արդեօք:

Թում. (ներսեմ). — Բաց: Պահանջող սպայն:

Գար. — Պահանջող սպայն: Ա՛յսպէս շուտ... Ի՛նչ յիրաւի արդէն ցորեկ կ'ըլլայ (ձամբուել կեսը հասնելով ետ կը քաշուի, կանրեղը կը մարտ, և կ'երբայ բանտը):

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ր Ո Ր Գ

ԹՈՄ, Զինուորական, և Վերիկնէ:

Թում. — Բարի լոյս, Գաբրիէլ: Ըսէ՛, ո՞վ էր այս գիշեր պահպանութիւն ընողը:

Գար. — Ես ինքնին, պարոն, վասն զի խեղճ ծեր հայրս՝ դղեկին դռներուն պահպանութիւն ըրաւ:

Թում. — Քաջ և ազնի պատանի մըն ես: Մեղք՝ որ այս ահռելի տեղերս կը գտնուիս: Բայց դառնանք մէզի. կու գամ ես այս բանտերուս ներսերը դրուած պահանորդները վերցնելու, միտքս արդէն կը հասկնաս: Ծնորհք ըրէ՛, բաց:

Գար. — (ըսանալով աջ կողմը դռու մը). — Պարոն, անցիր:

Թում. (տեսնելով երկու ատրձանակները). — Թշուառութեանս. լաւ զինուած ես, կարծեմ. ոհ, իրաւունք ունիս: Երէկուան դէպքը ցուցուց՝ որ որ և իցէ զգուշութիւն անբաւական է:

Գար. — Հօրս գէնքերն են:

Թում. (կը ցածցնէ ձայնը). — Էհ, կը վախնամ՝ թէ նաև այս օր շատ տաք օր մը պիտի ունենանք... կրակ... կրակ... միտքս կը հասկընամ. Հալլան ֆլավէրհաւգէն գէշ լուրեր առինք: Կրեկոր սաստիկ կատաղութեան մէջ է, և կ'ըսուի թէ Հենրիկոս...

Գար. — Ի՞նչ կ'ըսուի Հենրիկոսի վրայ:

Թում. — Պատերը կը խօսին... ուրիշ բան չեմ ըսեր... (զինուորականը) Եկէք ետևէս: (Գարրիելի). Աշտարակին դռնէն դուրս կ'ելնենք:

Գար. — Ինչպէս որ կ'ուզես (կը մտնեն, և ինքը կը փակէ): Ոհ սպահովապէս իմացած պիտի ըլլան թէ պակտի է Գնդապետն: Եւ արդեօք ինչպիսի՞ լուրեր ընդունած պիտի ըլլան: Եփութութիւնները նորէն կը ծագին, ես կը դողամ

իմ դժբաղդ բարերարիս համար... Ահ ներքին խռովութիւն մը կը գուշակէ ինձ... (կը գարնենէ):

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Գ

ԴԱԽԻԹ և Վերիկնէ:

Դաւ. (վշտահար). — Վա՛յ ինձ, որդեակ, այլ ևս կարող չեմ: Գղեկին մէջ այս գիշեր ոչ ոք կրցաւ քնանալ, և յետոյ՝ գիտէի թէ դու հոս ես, և բնաւ հանգիստ չէի:

Գար. — Ա՛խ հայր իմ. ասկէ աւելի տազնապալից գիշեր չէի անցուցած:

Դաւ. — Ի՞նչ. հոս ներսը ուրիշ բան մը հանդիպեցա՞մ:

Գար. — Չէ՛, հայր իմ:

Դաւ. — Կրճղը տանի: Ուրեմն առանց պատճառի մի՛ վախցնէր զիս: Հիմա վերցուր անկէ այն ատրճանակներն, և դիր այն ստուլին արկղիկին մէջ: Հոն մէկը անոնց չի դաչիր, և ես պիտի գործածեմ զանոնք առաջիկայ գիշեր:

Գար. (զանոնք արկղիկին մէջ դնելով). — Բայց նորէն ի՞նչ հանդիպեցաւ դղեկին մէջ, որ ոչ ոք կրցաւ քնանալ:

Դաւ. — Կէս գիշերուան դէմ լսուեցաւ երթեւեկ մը զինուորներու, ծառաներու, զօրականներու...

Գար. — Իսկ պարոն Գնդապետը:

Դաւ. — Զինքն ի ֆլավէրհաւգ տանող ուղեկիցներն յաղթուեր և ցիրուցան եղեր են՝ Միլվուտի իշխանին պաշտպաններէն, և կ'ըսուի թէ ինքն հիմայ այն քաջ և հաւատարիմ հըպատակներուն զլուխն է, և թէ հոն հասնելուն պէս՝ Հռիքարտոսի հետևողներուն հետ միացած ըլլայ, և զէնքը ձեռքը՝ հրապարա-

կաւ ծանուցած ըլլայ նենգաւոր բռնաւորին իւր անկումը, և հրատարակած մեր հին օրինակները իշխանին փափագելի վերադարձը:

Գար. (ոչբախտընթեամբ). — Կարելի է:

Դառ. — Մի բարձրացնէր ձայնդ:

Գար. — Մի վախնար, միայն ենք:

Դառ. — Այս տեղերու մէջ երբեք միայն չենք:

Գար. — Բայց ըսէ՛, կ'աղաչեմ, թէ կրնամք տակաւին յուսալ որ այն թշուառ բանտարկեալն ազատի:

Դառ. — Սուրհանդակները ժամէ ի ժամ իրարու յաջորդեցին մինչեւ լոյս: Բոլոր նամակները գաղտնի են. սակայն գիշերուան միջոցը՝ իրենց շատ անգամ տուած և ետ առած հրամաններէն դատելով, կրնանք պատճառաբանութեամբ մակաբերել՝ որ բերուած լուրերը՝ այն թշուառին վիճակին՝ այնչափ նպաստաւոր չեն: Քանի մը շոկատներ հասան, կրկնեցին, մանաւանդ թէ երեքկնեցին բոլոր պահանորդները: Կրեկոր երկու անգամ ելաւ անձամբ քննելու ծովեզեր պահապանները: Վերջապէս երբեք չդադրեցանք դռները բանալէն և փակելէն, գիշերապահ զինուորները դիտելէն և սուրհանդակներուն հրամանները ստուգելէն: Մէկ խօսքով, կը թուի թէ կը սպասեն հոս յարձակման: Այս գիշեր ամբողջին պաշտօնեաներէն այլ և այլ ծերբակալութիւններ ըրին: Երկու մարդիկ՝ որ պատուարներուն մօտենալու փորձ կը փորձէին՝ ձեռք ինկան, տարուեցան ծովեզրը, և շուտ մը հրացանի բռնուեցան:

Գար. — Ի՞նչ անգթութիւն:

Դառ. — Անոնց վրան այլ և այլ թուղթեր զըտնուեցան, որոնք քննուեցան իսկոյն, և որոնց համար կրեկոր մեր բանտարկեալին նոր հարցութիւնը ընել տուաւ:

Գար. — Ա՛յս գիշեր:

Դառ. — Լուսնալէն ժամ մը առաջ: Ես ինքնին առաջնորդեցի իրեն իւր բնակարանը, և թեքուս իւր բանտը ասկէ տարած ըլլան:

Գար. — Ո՛չ, հայր իմ:

Դառ. — Ուրեմն դեռ դղեկին մէջ պիտի ըլլայ: Կարծեմ, զաւակոս, թէ այս մարդուն կորուստենէն կամ ազատութենէն կախուած համարին իրենց մեծագոյն շահերն:

Գար. — (Եւ ետ զինքը իրենց դահիճներուն ձեռքը տուի). (ցաւով):

Տ Ե Ս Ի Լ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ՍԱՄՈՒԵԼ, ՍԱՀԱՍ և ՎԵՂԻԼԵՐ:

Սաւ. (հասարակածեւ յուրս՝ կանչելով). — Գաբրիէլ, ո՛ր ես:

Դառ. — Ի՞նչ է այս:

Գար. — Ո՞վ է այսպէս ուժով կանչողը:

Սաւ. (խելպես վերջ). — Գաբրիէլ, Գաբրիէլ:

Գար. — Ատուած իմ, Սամուէլի ձայնն է:

Դառ. — Գնա՛ տես:

Գար. (կ'երթայ կը բաւայ). — Ի՞նչ եղած պիտի ըլլայ արդեօք:

Սաւ. (յուսահատած). — Ա՛յն Գաւիթ, իմ խեղճ հօրս վրայ գութ ունեցիր:

Դառ. — Ի՞նչ հանդիպեցաւ իրեն:

Գար. — Ի՞նչ նոր բան կայ:

Սաւ. — Զերբակալեցին զինքը:

Դառ. և Գար. — Զերբակալեցի՞ն:

Սաւ. — Եւ ահա, հոս կը բերեն:

Սաւ. — Խեղճ հայրիկ: Անպիտան զինուորներ:

Դառ. — Բայց ինչպէս կրնայ հաւատացուիլ որ այն խեղճ մարդը...

Տ Ե Ս Ի Լ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Սպայ մը խելքով մը, կը բերե գՅԱՌՐ, և վերջինը:

Յակ. — Ա՛խ սիրուն գաւակներս, և դու ամենա սիրելի կնքահայրս՝ ողբացէ՛ք զիս վասն զի հիմա ինձ համար լինցաւ:

Դաւ. — Մի՛ վախեր: Ի՞նչ բան կայ: Մենք կը ջանանք...

Յակ. — Ա՛լ դարման չկայ: Իմ որդիներս որբ են: Անգամ մը այսպիսի մարդկան ձեռք ինկած, ա՛լ ուրիշ բան չի մնար՝ բայց ինքզինքը Աստուծոյ յանձնել և կտակը շինել:

Սա՛ն. — Մի՛ լար, հայրիկ, ամենուն համար Աստուած կայ:

Սա՛ն. — Եթէ մէկուն չարիք մը չըրիր, ի՞նչ բանի համար գրեզ պիտի պատժեն:

Դաւ. — Է՛հ, հանգարտէ: Գիտեմ ես թէ ազուաջ մըն ես, բայց կեցցէ՛ երկինք, գիտեմ նաև որ քու պարտուցդ ճշգուծեան մէջ և հաւատարմութեանդ՝ առանց վերապահութեան՝ կրնամ երաշխաւոր ըլլալ քեզ համար:

Յակ. — Ի՛հ, բանը հոն չէ, սիրելի կնքահայր: Բայց չե՞ս հասկնար որ բոլոր այս ձախորդութիւններուն պատճառն այսօրուան տօնն է: (յուսահատելով) Ամէ՛ն տարի, ամէ՛ն տարի այսպէս:

Դաւ. — Բայց ստուգիւ, պարոն սպայ, շնորհք բրէ յայտնէ ինձ...

Սպայ. — Մի՛թէ չե՞օ գիտեր որ այս նաւավարս անուղղակի կերպով օգնեց Գնդապետին փախըտեանը:

Գար. — (Երկինք):

Դաւ. — Ա՛հ, ուրեմն Գնդապետն իրաւ փախե՞ր է:

Սպայ. — Էւ փախաւ ասկէ կախում ունեցողի մը հետ մէկտեղ:

Յակ. — Բայց ես՝ ինձ տրուած հրամանները կատարեցի: Ես ի՞նչ գիտէի...

Սպայ. — Բա՛ւ է այսչափ: (ըռչող մը կու տայ Դաւրի) Կրեկորի հրամանն է այս՝ զինքը բանտ դնելու՝ մինչև որ քննուի իւր ընթացքը լաւագոյն կերպով:

Դաւ. — Է՛հ, մէկդի՛, մի յուսահատիր, որդեակ իմ, ինչ որ հասկցայ, քեզ բնաւ չարիք մը չհանդիպիր. բայց հիմակուհիմայ...

Յակ. — Հիմակուհիմայ կը պատրաստուիս զիս վանդակին մէջ դնելու: Ափոսս ինձ (դռչար կը շուռնիւ աղմուշի աղաղակներ, և քմրուշի դափիւն):

Դար. (որ գնեւած պիտի ըլլայ). — Հայր իմ, հաւ Կրեկոր այցելուն:

Դաւ. — Սիրելի Յակոբ, համբերութիւն ունեցիր... բայց...

Յակ. — Է՛հ, կը հասկնամ միտքդ:

Սա՛ն. — Ո՛հ, հայրս (գրկելով):

Սա՛ն. — Զիս ալ հայրիկին հետ բանտ դրէք (սաստիկ կու լայ):

Դաւ. — Սիրտ առ, ես կը խօսիմ հանրային այցելուին հետ, և կեցցէ՛ երկինք՝ պիտի ընդունի իմ երաշխաւորութիւնս:

Յակ. — Կնքահայր, զիս շատ սև տխուր բանտի մէջ չդնես, կ'աղաչեմ:

Դաւ. — Դղեկին ամէնէն աւելի գեղեցիկ բանտը քեզ կու տամ: Կայէ:

Յակ. (եւ քաշուելով). — Ի՛նչ անուշիկ գեղեցկութիւն:

Դաւ. — Շ՛ուտ, շ՛ուտ, ինքն եկաւ:

Յակ. — Ա՛լ դեղ դարման չկայ (կը գրկի որդիքը լալով, և կը մտնէ բանտը, յետոյ Դաւրի դռնը կը փակէ: Դափիւն քմրկի):

Տ Ե Ս Ի Լ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

ԿՐԵՎՈՐ, ԵՆԵՆԸ ԹՈՄ, և ՍՍԿԱՅՔ:

Սաճ. (ժռուր դնելով Սահակի հետ). — Ահ, տէր, թողութիւն իմ հօրս համար:

Սահ. — Շնորհք՝ հայրիկիս համար:

Կրեկ. — Ո՞վ է այս պատանին (առ Գառիս):

Գառ. — Տէր, այս այն խեղճ նաւավարին տըղան է, զոր ձերբակալել տուիր:

Կրեկ. — Ան՞ո՞ր:

Գառ. — Այ՛ն, և կրնամ երգնու... և

Կրեկ. — Խօսք չուզեր, եթէ ինքը յանցաւոր չէ, կ'ազատի:

Սաճ. — Բայց տէր...

Կրեկ. — Վերուցէք առջևէս այս երիտասարդը:

Սահ. — (Ինչ չար մարդ է):

Սաճ. (մեկ ձեռքը սևոր բերնիկն դնելով). — Լռէ՛:

Գառ. — Գնա՛, Սամուէլ, և դու ալ՝ ազնիւ գաւազ: Եւ դու, Գաբրիէլ, տար զերէնք դիր բնակարանը:

Գար. — Եկէ՛ք:

Գառ. — Յակոբի վրայ խօսելու ժամանակը չէ այս: Բայց հանգիստ կեցէք ես պատասխանատու կ'ըլլամ քու հօրդ:

Գար. (դռուր կը տանի զՍաւուշի և զՍահակ):

Կրեկ. (կ'սկիւարիկ սպայիկն քաշուելու). — Գաւթ, հետդ խօսելիք ունիմ:

Գառ. — Ինչ կը հրամայես:

Կրեկ. — Քու փորձուած ընթացքդ՝ իմ բոլոր վտանգութեանս զբեզ արժանի կ'ընէ: Կարելոր է որ աչքիդ առջև դնեմ մեզ սպառնացող վտանգը: Յոյս դրած եմ հպատակութեանդ և հաւատարմութեանդ վրայ:

Գառ. — Տէր, երեսուն տարի ծառայեցի թէ՛ այս թէ՛ միւս աւատառուին, առանց բնաւ պարտքէս պակսելու:

Կրեկ. — Քլավէրհաւզ խոովութեան մէջ է:

Գառ. — (Եւ ես ուրախ եմ):

Կրեկ. — Քաղաքին մեծերն ապտամբները կը պաշտպանեն: Հենրիկոս անոնց գլուխն է:

Գառ. — (Ինչ գեղեցիկ լուր):

Կրեկ. — Նա կը սպառնայ մեզ. և այնպէս քաջ տեղեակ է տեղերուն, որ արգիլեց ամէն հաղորդակցութիւն մեր իշխանին հետ, այնչափ որ մեր գործողութիւններն իրեն իմացնելու համար, ուրիշ միջոց չի մտար մեզ՝ բայց եթէ վտանգի նշանը:

Գառ. — (Այս չէի գիտեր):

Կրեկ. — Ինձ այնչափ վախ չէր ազդեր Հենրիկոս դրուժանը՝ եթէ նաեւ հոս թշնամիներէ պաշարուած չըլլայինք: Այո, նաև մեր մէջն իսկ անոնցմէ կը գտնուին, բայց ձեռքս ունիմ ոչ սակաւ պատանդներ, և վայ անոնցմէ լաւագոյններուն, եթէ զինուց բազմը անոնց նպատատար ըլլայ: Անոնցմէ վատասիրտը՝ զինը կը կորսնցնէ յաղթանակէն առաջ: (յեւտոյ կ'ուշոյէ խօսքը մերոյ այս մերս այն գիւնուորիկն). Թո՛մ, պատուիրէ որ Սպայ մը աւրակեան աշտարակը ելնէ, սև դրօշը պարզել տայ, և մերթ ընդ մերթ թնդանօթ մը իմացնէ ի Քլավէրհաւզ մեր կացութիւնը: Դու, Որսանոյ, զրկէ սուրհանդակ մը՝ որ ըլլայ այս թուղթիս տանողը:

Սպայ. (զարմացած կ'երևի):

Կրեկ. — Չարմանք մի ցուցներ: Գիտե՛մ՝ թէ պիտի բռնուի թշնամիներէն, բայց ճիշդ իմ ուզածօս այս է: Այս թուղթս պիտի համոզէ՝ որ զղեկիս մէջ գործադրութիւն մը չէ հանդիպած և ոչ հանդիպելու վրայ է: Թող հրամաններս կատարուին, և իսկոյն դարձիր,

հետդ խօսելիք ունիմ (կու տայ իրեն րուշ-
րը):

Սպայ. (կը մեկնի, յետոյ քիչ առնեկն կը դաւ-
նայ):

Գաւ. — (Լաւ է: Այս յապաղումս կրնայ օգ-
տակար ըլլալ բանտարկեալներուն):

Կրեկ. — Գու, Գաւիթ, գնա իմ բնակարանս,
առ բանտարկեալը, բեր այս սրահիս մէջ, և
շարունակէ մեծ զգուշութիւնդ իրեն վրայ:

Գաւ. — Ի՞նչպէս, տէր: Ա՞յս սրահիս մէջ, և
ո՞չ բանտարկեալներուն բնակարանը:

Կրեկ. — Հաւատարապէս այս տեղս ալ ապա-
հով է: Աւելի ևս ազատութիւն տուր իրեն:

Գաւ. — (Ի՞նչ անտվոր գլխարտութիւն):

Կրեկ. — Կատարէ նաև իւր բոլոր փափագնե-
րը: Ամէն բանէն աւելի կը պահանջեմ՝ որ
այս դղեկիս մէջ ամէնքը գիտնան ինչ կերպով
կը հրամայեմ քեզ՝ որ հետը վարուիս: Հան-
դերծ այտու խիտ պահպանութիւն ըրէ վրան.
և մտածէ՝ որ քեզ միայն և քու որդւոյդ կը
յանձնեմ անոր ծառայելու և անոր վրայ հըս-
կելու պարտաւորութիւնը:

Գաւ. — Մեր պարտքը կ'ընենք:

Կրեկ. — Գալով իրեն կերակուրներուն՝ պատ-
շաճ հրամաններն արդէն տուի: Փութա ու-
րեմն, և գնա առ զինքը:

Գաւ. (Մարդասիրութիւն կ'ուզէ ցուցնել, բայց
իւր դէմքը կը մատնէ գինքը). (կ'եղև հասա-
րակածեկ):

Կրեկ. — Ստեփան, մտիկ ըրէ: Հոխքարտոս
պէտք է մենոնի. այս է Ռայմոնտի հրամանն,
և պէտք է շուտ ըլլայ անոր մահը՝ մեր թշնամի-
ներուն խորհուրդներն ի դերև հանելու համար.
բայց ամէն բանէն աւելի պէտք է գաղտնի ըլ-
լայ, վասն զի շրջապատուած ենք իրեն անձ-
նանուէր մարդիկներէն: Հենրիկոս տեղեկութիւն
կրնայ առնուլ և իւր յուսահատութիւնը մեզ
ըլլալ աղիտարեր:

Թում. — Հիմա ուրեմն...

Կրեկ. — Հիմա ուրեմն գիտես դու թէ սովո-
րաբար ինչ տեսակ տանջանք կը գործածենք՝
աներևոյթ ընելու համար զանոնք՝ սրոնց մահը
հարկ է ամէնէն ծածուկ մնայ: Երբ Հուի-
քարտոս հոս դարձած ըլլայ, դու իրեն կերա-
կուր բերել կու տաս, և դու անձամբ Գաբրիելի
կը յանձնես թունաւորած ըմպելին՝ որ իրեն
պիտի տայ: Կշանն ըլլայ թնդանօթի հարուած
մը: Զգուշացիր Գաբրիելի բառ մ'ըսելու, այն
պատանին նոյն իսկ անմեղութիւնն ըլլալով,
կատկածն իրմէ օտար է, և Հուիքարտոս բնաւ
պիտի չկարենայ տարակուսիլ մահն անկէ ըն-
դունելու: Ես պիտի չմօտենամ այս տեղոյս,
մինչև որ...

Թում. — Մարդ կու գայ (Գաբրի բնակարանը
կ'երրայ):

Կրեկ. — Լսութիւն, և ելնենք (կ'երրայ միշտ
կողմը):

Տ Ե Ս Ի Լ Ե Օ Թ Ն Ե Ր Ո Ր Գ

ԳԱՒԻԹ ՀՈՒԲԱՐՏԻ հետ կը մտնէ, միևնչեւ
ԿՐԵԿՈՐ որ կ'եղև կարեկցուքաւ կեղծաւոր
դեմքով իրեն կը նայի, և սա կը համապա-
տասխակէ իրեն այնպէս յանապա-
հաւանաբար շարժմամբ:

Հռիթ. — (Հենրիկոս փախեր է... Պատճառը
կը գուշակեմ, կը տրոփէ սիրտս և կը դողամ
իւր բաղդին վրայ):

Գաւ. — (Ինչպիտի տխուր յուսահատութիւն կը
տեսնուի բոլոր իւր կերպարանքին վրայ: Գաբ-
րիել իրաւունք ունի: Իւր ազնուական և սի-
րալիր դէմքը կը գորովէ և լացնել կու տայ:
Պէտք է գրգուեցնել զինքը): Տէր, կրնաս դու,
եթէ կը հաճիս, այս սրահիս մէջ անցնել օրը,

և յետոյ հանգչելու համար՝ փոխադրուիլ այն սենեակը (ցուցնելով ճախակողմը) որ հանգիտ է, օղաւէտ և լաւ կահաւորուած:

Հռիթ. — Կը յուսայի ես՝ որ զիս մահուան տանէիք:

Գառ. — Մահուան: Ի՞նչ կը մտածես դու, մահաւանդ թէ կրեկոր այցելուն՝ յանձնարարեց մեզ որ կարելի եղած խնամքը ցուցնենք վրադ:

Հռիթ. — Ի՞մ վրաս:

Գառ. — Այո, յայտնի է: Ես պատուէր ունիմ հետզ վարուելու մեծագոյն մարդավարութեամբ: Եւ թէ ինձ, և թէ ազնիւ Գաբրիէլի յանձնուած է ծառայելու քեզ՝ ինչ բանի որ պէտք ունիս: Խնդրէ ուրեմն, և մենք մեր պարտքը կ'ընենք:

Հռիթ. — (Հիմա միտքս կու գան Հենրիկոսի ազդարարութիւնները: Ահաւասիկ մահուան կարապետ գթութիւնը):

Գառ. — (Տարօրինակ է, որ իմ ըսածներու հակառակ, ինքն ալ աւելի կը տխրի):

Հռիթ. — (Ի՞նչ ահագին նենգութիւն է այս. անմեղներու ձեռքով թշուառ մը սպաննել, ի՞նչ սոսկումն, գէթ կարենայի այս մարդէս Հենրիկոսի վրայ լուր առնուլ) Ըսէ ինձ, բարի ծէր, դու շատ կը սիրես Հենրիկոսը... այնպէս չէ՞:

Գառ. — Խիտ շատ:

Հռիթ. — Ուրեմն կը յուսամ որ պիտի ուզենաս անոր վրայ տեղեկութիւն տալ ինձ:

Գառ. — Ոհ տէր, գալով ասոր՝ չեմ կրնար հաճեցնել զքեզ: Խօսութեամբ արգիլուած է ա՛նոր վրայ խօսիլը:

Հռիթ. — Ի՞նչ անգութ անստուգութիւն (կը ճետոռի նստելու):

Գառ. — Եթէ գիտնայիր, տէր, թէ որչափ կը ցաւիմ այս միջիմարութիւնը քեզ զլանալուս, մինչդեռ զիտեմ՝ թէ պարտական եմ քեզ մեծ

բարեգործութեան մը համար: Բայց սիրտ առկենաց մէջ ամէն բան կը փոխուի: Ուրիշ կողմանէ, մարդս ճոխացած է միշտ Աստուծոյ բաւական զօրութեամբ աղետոյց համբերելու, երբ ուղիղ և հանդարտ է իւր խիղճը: Եւ յետոյ, հաւատա ինձ, որ չարագործները միշտ չեն յաղթանակեր, և երկինք բնաւ չթողոր մարդկանց մէջ բան մը անպատիժ:

Հռիթ. — Բարի մարդ, իմ խիղճս հանդարտ է. և բան մը զայն չխայթեր: Տանջանքիս վայրկենանը կը մօտենայ, բայց անոր մերձենալը կը տեսնեմ առանց երկիւղի (քեղանօթի հալոշած) Ի՞նչ է այս: Ահ, թերեւս իմ մահուանս նշանը:

Տ Ե Ս Ի Լ Ո Ի Թ Ե Ր Ո Ր Դ

ԳԱԲՐԻԷԼ ափսեով որուն վրայ շիշ մը և գաւաթ մը, և վերիներ:

Գառ. (ցնկով ափսեի խորը ստոյլի մը վրայ). — Տէր, հիմայ նոր բերին կերակուրդ այս բնակարանին մէջ: Երբ ուզես երթալ հոն՝ ես անձամբ կը ծառայեմ քեզ:

Հռիթ. (ափսեով ափսեի վրայ). — Գու, Գաբրիէլ:

Գառ. — Ի՞նչ ունիս, հայրս, որ այսպէս զքեզ տրտմած կը տեսնեմ:

Գառ. — Ոչինչ, սիրելի, ոչինչ: Սակայն... չեմ գիտեր ինչու... հոս... սքսիս մէջ... Բայց ոչինչ է: Բանտարկեալին հետ մնացիր, ես հանդարտութեան պէտք ունիմ: Կ'երթամ գտնելու Սամուէլը, և իմ սանիկս:

Գառ. — Այո, հայր իմ. աղէկ ըսիր, Սամուէլը մխիթարութեան պէտք ունի:

Գառ. (կը նայի Հռիթարտի, կը սղակ: Գարրիելի ձեռքը և կ'էլեկ յարով):

Գար. — (Ջեմ համարձակիր իրեն նայելու: Կը վախնամ որ հետո բարկացած ըլլայ: Եթէ բառ մը միայն ըսէր ինձ, իրեն ոտքը կ'իյնայի, և կը խնդրէի թողութիւն):

Հռիթ. — (Այո, միտքս դրի: Արդէն թէ և յարթանակէր իմ արդար դատս, ես շուտ կամ ուշ՝ թշնամիներուս կատարութեան զոհ պիտի ըլլայի):

Գար. — (Ինչպէս խոսված, տժգոյն, գողգոշուն է. կ'ազդէ ինձ երկիւղ, և զթուծիւն):

Հռիթ. — (Պէտք էր թոյն մ'ըլլար իմ կատարածս... և... տես ո՞վ կը ներկայացնէ ինձ զայն: Արդեօք ինքը գիտէ՞. ահ, ոչ, չեմ կըրնար հաւատալ): Գաբրիէլ...

Գար. (խշ ծուկիկ իյնալով). — Ախ բարերարս, դու ըսելու վրայ ես ինձ...

Հռիթ. — Ոչինչ: Ես քեզ յանդիմանութիւն մը չեմ ուզեր տալ:

Գար. — Կուտայի ես բոլոր արիւնս սզատելու համար գքեզ, և հիմայ ալ կու տայի առանց վայրկեան մը վարանելու: Բայց ինչպէս...

Հռիթ. — Ելիր, սիրելի: Ըսէ ինձ, ինչո՞ւ կու գաս ընձեռելու ինձ այս օգնութիւնս, որ ես քեզմէ չխնդրեցի իսկ. ինչ կայ այս շեշին մէջ:

Գար. — Կրեկորէն բերել տուած գինի:

Հռիթ. (բառերը ժանրացնելով). — Գինի՞... Կրեկորէն... և ուրիշ բան չէ:

Գար. — Կերակուրը, ինչպէս կ'ըսէի, սենեակդ տարուեցաւ:

Հռիթ. — (Է՛հ ոչ, անմեղը չկրնար ինձ մահ տալ): Գաբրիէլ, հասեր է ժամը՝ որ ես փոխարինեմ քու գորովալից խնամքներուդ, զոր՝ իբրև պահապանս՝ ցուցուցիր ինձ:

Գար. — Ոհ, տէր, ես ուրիշ բան չըրի, բայց եթէ սրտիս դրդմանը հետեւիլ, և թեթեակի երախտագիտութեան պարտքը կատարել:

Հռիթ. — Այն օրէն որ գքեզ ճանչցայ՝ դու կ'ազդես ինձ գորովագութ սէր մը, և չեմ ուզեր որ լմնայ այս քեզ համար առանց արդեան. որովհետեւ մեծ վնաս կ'ըլլար, որ այնքան համեստ և սիրուն ձիրքեր՝ որ կը զարդարեն քեզ, թաղուած մնային, կամ նսեմանային օր մը այս ազիտաւոր բնակարանիս մէջ:

Գար. — Ախ, դժբաղդաբար պէտք եմ բոլոր կեանքս հոս անցընել:

Հռիթ. — Դու կ'ելնես ասկէ, Գաբրիէլ, դու կ'ելնես ասկէ: Տուր ինձ գրելու կարեւորքը (կը մտնեւայ ստոյկիկէ գրելու համար):

Գար. (վարակոտ զարմացմամբ կարեւորները առնելու համար):

Տ Ե Ս Ի Լ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

ՍԱՀԱԿ ԲԱՆԱԿՐՈՎ ԽՈՐԻԷ ԿՂԱԾ ԴՈՒՅՐ, և ՎԵՐԻՆԵՐ:

Սահ. (գրուխը հանելով). — Գաբրիէլ, Գաբրիէլ (քովը վագրելով) Ըսէ, առանց պապզ գքեզ տեսնելուն՝ չե՞ս կրնար տանիլ զիս որ հայրիկս տեսնեմ:

Գար. — Ո՛չ, սիրելի, վասն զի բանալին իրեն քովը չէ: Եւ ուրիշ կողմանէ, կը բարկանայ մեզ: Գնա՛, գնա՛, Սահակս, այս տեղ չես կըրնար կենալ (կ'ուզէ յրկիւղ, և Հռիթարտ զիկքը կ'արգելու):

Հռիթ. — Կեցի՛ր: Այս այն տղան չե՞ որ երէկ տեսայ այն նաւավարին տանը մէջ՝ ուր հիւրընկալուեցայ:

Սակ. — Այո՛ տէր, իրեն տղան եմ: Է՛հ աղէկ կը յիշեմ գքեզ: Այնչափ վախ ունեցանք, երբ ըննեցին գքեզ... շատ լացինք, շատ... Բայց դու ալ, ո՞հ ինչպէս տխուր ես. ուրեմն բանտարկեալ ըլլալը շատ զէջ բան է:

Հռիթ. — Այո՛, գաւակօ, բայց աւելի գէշ է եթէ
յանցաւոր է: Անունդ կարծեմ Սահակ է:

Սահ. — Այո՛, տէր:

Հռիթ. — Ազնիւ Սահակ, ա՛ն քեզ այս մատնիս:
Ես զայն անձէ՛ մ'առի՛ որ ինձ մեծապէս սի-
րելի էր... ա՛ն, և խոստացիր որ միշտ քովդ
պիտի պահես:

Սահ. — Միշտ: Ո՛հ ինչ աղուոր բան է. ինչպէս
կը փայլի, Գաբրիէլ, նայէ՛:

Գար. — Բաւական է այսչափ, հիմա գնա՛, վասն
զի կնքահայրը կը սրողղի:

Սահ. — Բայց նայէ՛ այն պարոնը ինչ ընծայ
տուաւ:

Գար. Աղուոր է. պահէ՛: Հիմա գնա՛:

Սահ. — Գու այ միշտ զիս կը վռնտես, իբրև
թէ մէկուն գէշութիւն մ'ընէի:

Գար. — Վերջապէս հնազանդէ՛:

Սահ. — Է՛հ, կ'երթամ, կ'երթամ. բայց այս
ազնիւ պարոնին ձեռքը կ'ուզեմ նորէն պագ-
նել (կը դառնայ համբուրելու Հռիթարտի
ձեռքը, և կը մէկնի վագելով):

Հռիթ. (կը պատրաստուի գրելու, յետոյ կ'սկսի
կ'առնու, վար կը դնէ գրիչը և կը դառնայ
յառաջակողմը). — Բաղդը զիս թշուառ քրաւ՝
աւելի քան ինչ որ աշխարհի մէջ կրնայ ըլ-
լալ մարդս, կամ եղած ըլլայ երբեք: Ես միայն
եմ երկրիս վրայ: Ընտանիքս մարած, և ա-
նունս գրեթէ մոռցուած: Վ՛այ, վ՛այ, որդեակ
իմ, աշխարհի մէջ վշտագնեալ մարդուն: Իսկ
արդ, դու որ ցաւակից եղար ինձ թշուառու-
թեանս մէջ, որ այնչափ առատաձեռնեցիր ինձ
գրեթէ որդիական ծառայութիւններ, դու եղի՛ր
իմ վերջին օրս իմ սփոփանքս: Գու դժբաղ-
դութեամբ կորուսածիս տեղը բռնէ՛:

Գար. — Ե՛ս, տէր:

Հռիթ. — Հայրենիքէս տարագրուելէս առաջ, յա-
ճողեցայ Էտիմպուրկի մէջ բարեկամի մը քով

աւանդել գումար մը՝ որ միշտ անվթար մնա-
ցած է իւր ձեռուընդերուն մէջ: Կը պահէի ես այս
դրամս իբրև նուիրական աւանդ մը, յուսա-
լով որ օր մը, դիպուածը, և իմ խուզարկու-
թիւնս պիտի գտնել տային ինձ ... ունայն
հոգ... անօգուտ աղօթք... մինչև վերջին կա-
թիլը խմեցի թշուառութեանց բաժակին մէջ:

Գար. — Կ'աղաչեմ, մի յուսահատութեան մատ-
նէր գրեզ:

Հռիթ. — Լացս և հառաչանքս լնացուցի: Գու-
մարը, որուն վրայ կը խօսիմ, քուկդ է, բոլոր
քուկդ է այս վայրկենէս:

Գար. — Ի՞մա: Ի՞նչ կ'ըսես:

Հռիթ. — Այսպէս կրնաս թողուլ պաշտօն մը,
որ քեզի համար չէ:

Գար. — Ո՛հ, տէր, ի՞նչ է ըսածդ: Այս աշխար-
հիս մէջ դու գրեզ միայն դժբաղդ կը կար-
ծես. բայց քու թշուառութենէդ զատ կան ու-
րիշ անագորոյն աղէտներ: Ո՛չ ոք, տէր, դըժ-
բաղաբար, ոչ ոք պիտի ուզէ միացնել իմ
իւր բաղդին հետ. ըլլալով ես խեղճ որբ մը:

Հռիթ. — Ո՞րբ:

Գար. — Յայտնի է. չեմ ալ գիտեր թէ որուն
որդին եմ. և ոչ թէ իմ ծնողքս դեռ կ'ապրին:

Հռիթ. — (Ատուած մեծ): Բայց քու հայրդ այն
բարի ծերը չէ՛:

Գար. — Ո՛հ, ոչ. ինքն անոր հայրն է՛ որ մեծ
վտանգէ մը ազատեց զիս, և մեռաւ իմ պատ-
ճառաւս:

Հռիթ. — (Ի՞նչպէս կը բաբախես, ով իմ սիրտս):

Գար. — Ըսէ՛ հիմայ, տէր, ըսէ՛, եթէ կը հա-
մարձակիս, որ աշխարհիս մէջ միայն դժբաղդը
դճու ես:

Հռիթ. (դողդոջուն ձայնով). — Հանէ՛ զիս, ով
մանուկ, հանէ՛ զիս ուրեմն այս մահագոյժ
անձկութենէս: Անունդ ի՞նչ է:

Գար. — Գաբրիէլ:

Հռիթ. — Ո՛հ, ո՛հ, ընտանեացդ անունը:
 Գար. — Չեմ գիտեր: Գիտեմ՝ թէ Միլվուտի զղեկին մէջ ծնած եմ, և թէ այն գիշերն յուրում զղեկին վրայ յարձկեցան և կրակ տուին, զիս ազատեց Գաւթի որդին: Գուցէ իմ ծնողքս մեռած են:
 Հռիթ. — Քանի՞ տարուան էիր այն ատեն:
 Գար. — Երեք տարուան:
 Հռիթ. (հեղձանդձուկ ձայնով և արուի մը վրայ իյնալով). — Ա՛հ, ամէն բան կը յարմարի, թերևս իմ գաւազս է:
 Գար. — Ո՛հ արդար երկինք. կը նուազի: Ի՞նչ պէս օգնեմ իրեն: Չեմ համարձակիր մարդ կանչելու... Ա՛հ, այս գինիս իրեն ոյժը կը կազդուրէ (կը վազէ շիշն և գաւարն առերու: Գիւնիկ կը յեցնէ և կը մտակցնէ րուեւաշորսժ գաւարն Հռիթարտի շրթանցը) խմէ՛, խմէ՛, և աղէկ կ'ընէ:
 Հռիթ. (խնդրահար կը գտնէ, աղաղակ մը կը փրցնէ, և սոսկմամբ կը մոյճ գաւարը). — Ո՛հ եղկելի (ոտը ցատկերով):
 Գար. (գարնուրած ետ րաշուշերով). — Ի՞նչ կայ:
 Հռիթ. — Ի՞նձ կու տաս այն գաւաթը...
 Գար. (շփոթած). — Քեզ, զքեզ զօրացնելու համար:
 Հռիթ. — Ի՞նչ սարսափելի բան: Ո՛րչափ խիղճդ պիտի զարնէր:
 Գար. (զարմացած). — Ո՛հ Ատուած. խի՞ղճս: Բան մը չեմ հասկնար:
 Հռիթ. — Ինքիրմէս դժուր ելած եմ. (հաւառնոտ կանգիստ) (Ահա ուրեմն իմ գաւազս, և ինչպիսի՛ ատեն: Ա՛հ, ծածկենք իրմէ աղէտներուն մեծագոյնը: Չըլլայ բաժանորդ անհուն արհաւիրքին՝ զոր կը կրեմ ես, և չգիտնայ, որ հայրասպան ըլլալու մօտ էր):
 Գար. — Ինչպիսի՛ սաստիկ հեքեր կը շարժլին իւր կուրծքը: Ո՛րչափ արցունք կը թափեն իւր

աչուրներն... և ի՞նչպէս իմ մարմինս կը դռնայ: Ի՞նչպէս իւր առջևը սիրտս կը տրոփէ):
 Հռիթ. (ընդերկար ընդդիմադրեմէն յետոյ՝ կը մտնենայ Գարրիիկի, ձեռքը կը բռնէ, և կոշիկը սաստկապէս). — Ըսէ ինձ, ըսէ, Գարրիէլ... Եթէ հայրդ գտնէիր, ի՞նչ կ'ընէիր:
 Գար. — Ամէն բան, ամէն բան:
 Հռիթ. — Եւ եթէ ինքը թշուառ մ'ըլլար:
 Գար. — Ամէն հնարք կը փնտռէ՛ր իւր տառապանքը թեթևցնելու համար, և բաղդաւոր կը կոչէի զիս իւր քովը գտնուելու համար:
 Հռիթ. — (Ի՞նչ զգացման ազնուականութիւն): Երևակայէ որ գտեր ես, ի՞նչ կ'ընէիր:
 Գար. — Կը բռնէի իւր ձեռքը, և զխոստ վրայ դնելով. Օրհնէ՛ զիս, ով հայր իմ, կ'ըսէի իրեն, ինչպէս մայրս կ'օրհնէ՛ զիս իւր անմահական օթեանէն:
 Հռիթ. (խնդրահար դուրս բազուկները կարկառած դէպ ի գաւազը). — Ա՛խ որդեակ իմ, որդեակ իմ:
 Գար. (դրդուելով հիացմամբ). — Ի՞նչ կ'ըսես դու:
 Հռիթ. (հանդարտելով). — Այսպէս կ'աղաղակէր հայրդ՝ եթէ իմ դիպուածիս մէջ գտնուէր:
 Գար. — (Այս աղաղակը բոլոր իմ հոգիս վերի վայր բրտ):
 Հռիթ. — (Տամ իրեն՝ մեռնելու մօտ հայր մը՝ ինձ հետ զինքը գերեզման քարելու համար: Ո՛հ լռէ՛, լռէ՛):

Տ Ե Ս Ի Լ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

ԳԱՆԻԹ և ՎԵՐԻՆՔ

Գառ. — (խնդրահար դուրս, դանդաղելով, կը յառաչէ). — Թողուցէ՛ք զիս, թողուցէ՛ք:

Հռիթ. — Ո՛հ Գաւիթ...
 Գար. (կը դրդուի և իրեն առջև կը վազե). —
 Ի՞նչ ունիս, հայրս:
 Գաւ. (հրեղով գիւնը). — Թող զիս դու ալ: (Աս
 Հռիթարտ) Տէր, կ'աղաչեմ, պատասխան տո՛ւր
 ինձ. այս մատնիս որ քու ձեռքէդ ելաւ՝ ո՛ւս-
 կից ունեցար:
 Հռիթ. (յուսահատ շրմաւր). — Ի՛մս է:
 Գաւ. — Բայց այս կենդանագի՞րը:
 Հռիթ. — Վախճանած մօրս է:
 Գաւ. — Ո՛հ երկինք... չըլլա՞ն արդեօք:
 Հռիթ. — Իւր Հոբքարտոս որդին եմ:
 Գաւ. — Իւր որդին: Ի՛նչ կ'իմանամ: Ա՛հ, սի-
 րատուն տէրս, թող որ ծունկերդ գրկեմ:
 Հռիթ. — Ելի՛ր, բարի ծեր, և ըսէ ո՛վ ես դու:
 Գաւ. — Տէր, ես Գաւիթ Ժաքինտոն եմ, հօրդ
 դռեկին մէջի հին բանտապանը:
 Հռիթ. — Իսկ այս պատանեակը քու զաւակդ է:
 Գաւ. — Ախ, տէր, ս՛չ, ս՛չ, իմ զաւակս չէ:
 Քու որդիդ է:
 Հռիթ. — Ի՛նչ կ'ըսես... Ա՛հ, ես արդէն զինքը
 ճանչցեր էի. ճշմարի՛տ է արդեօք:
 Գաւ. — Այո, գքեզ չեմ ուզեր խաբել: Գաբրիել
 գրկէ՛ հայրդ:
 Գար. — Ո՛հ, իմ սիրելի հայրս. ո՞ն անակնկալ
 երջանկութիւն:
 Հռիթ. — Ինչպիսի՞ ուրախութիւն կը յորդէ
 սիրտս: Որդեակ, որդեակ, իմ... Սակայն ը-
 սէ, Գաւիթ, ի՛նչպէս ազատեցիր զինքը:
 Գաւ. — Ես չեղայ, այլ իմ խեղճ որդիս կա-
 ռոտս: Կարո՛ղս եղաւ, որ այն ասաւոր գի-
 շերը՝ յանդգնեցաւ մտնելու դռեկին մէջ որ կը
 կործանէր, և ազատել խեղճ մանկիկը: Մինչդեռ
 սակայն կը դառնար ազնուագին աւանդովս,
 հրացանի գնդակէ մը զարնուեցաւ: Հազիւ ժա-
 մանակ ունեցաւ տղան ինձ տալու, ըսելով՝
 Թէ ով է, և հօգին տուաւ:

Հռիթ. — Ո՛հ, դժբա՛ղդ պատանի: Եթէ կարե-
 նայի վարձատրել այնքան հաւատարմութիւն:
 Գար. — Մենք զհայրը կը վարձատրենք, հա-
 նելով այս արհաւիրքներէն դուրս:
 Հռիթ. — Ա՛յո, ուզածդ ըլլայ, Գաբրիել:

Տ Ե Ս Ի Լ Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

ԹՈՍ, չորս գիւնտորը, և վերինը:

Գար. — Ահ, պապս, սիրելի պապս, կորսնցը-
 նելու ժամանակ չկայ: Ես իմ հօրս քովն եմ.
 Բայց պիտի կորսնցնեմ քիչ առենէն, եթէ չա-
 գատես զինքը: (Սոսկաւր) Սոսկա՛... Գիտ-
 ցի՛ր... որ այն բաժակին մէջ...
 Հռիթ. — Այո՛, Գաւիթ, այն բաժակին մէջ թոյն
 կայ, և ինձ կու տար...
 Գաւ. (քստմաւր). — Ա՛հ, նենգող մարդասպան-
 ներ: Սակաւօրեայ կեանք ունիմ. բայց պիտի
 չդատապարտէք զիս տեսնելու իմ գեր սիրե-
 լիներուս կոտորածը: (Յաժ ձայնով) Ես պիտի
 ազատեմ քեզմով իմ հին տիրոջս որդին:
 Թու՛. — Ա՛հ մատնիչ, ա՛հ չարագործ (յառա-
 չելով պահապաններով):
 Գար. (պատասպարելով զՀռիթարտ). — Ո՛հ Աս-
 տուած: իմ հայրս:
 Թու՛. — Գէշ ժամանակ ըսիր: Զինուորնե՛ր:
 Գաւ. (դժոռարաւ սուրբ հանկով). — Վատա-
 սի՛րտ: Ծեր եմ... Բայց մինչև վերջին արիւնս
 զինքը պիտի պաշտպանեմ:
 Հռիթ. (Գաւրի սուրբ առնելով). — Ի՛նձ, ի՛նձ
 այն երկաթն: Պիտի մեռնիմ գէթ վրէժս ա-
 ռած:
 Թու՛. — Վազէ՛ մէկը կրեկորին իմաց տայ:
 Գար. (յաչող յիշողութեամբ մը աղաղակով). —
 Ո՛հ երկինք, դու կը թելադրես ինձ (կը յիշէ

ատրձանակները, կը վագե ստոյիև, կ'առնու
 մեկը և կը յարձկի թումի վրայ որ առանձ-
 նացեալ կը գտնուի, կը դնէ գայն կուրծքիև):
 Չշարժի՛ս, ապա թէ ոչ կը սպաննեմ գրեզ:
 Հռիթ. — Ո՛հ գաւակս:
 Թում. — Օգնութի՛ն:

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ո Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Կրեպոբ և Վերիեր:

Կրեկ. — Ո՛հ գայրոյթ, կատարուած չէ՞ն իմ
 հրամաններս: Ուրեմն ամենքէն մատնուած
 եմ: Եւ Հենրիկոս արդէն հորդան. տուեր է ի
 Քլավէրհաւզ, և հոս կը դիմէ՛ յաղթական Ռայ-
 մոնտի՛ իւր հետևողներով:

Հռիթ. — (Ո՛հ ցնծութիւն):

Դաւ. — (Ո՛հ հրճուանք):

Գար. — (Ո՛հ բաղդ):

Կրեկ. — Մի՛ ուրախանաք, ո՛վ նենգաւորներ,
 իմ հորձանմանս վրայ, որ զձեզ ազատելու
 թշնամին հասնելէն առաջ, վրէժս առնելու ինձ
 միջոց չի պակսիր: Հապա զօրականներ:

Գար. — Ո՛չ ոք շարժի, ապա թէ ոչ կը սպան-
 նեմ:

Հռիթ. — Ո՛հ որդեակ իմ:

Դաւ. — Ա՛հ ահաւասիկ, ահաւասիկ յաղթա-
 կաններն (միևչորեւ Կրեկորի զինուորներն
 յարձկեալ վրայ են Գարիիկի, Գաւրի և
 Հոիքարտոսի վրայ, Հեներիկոս կ'ըլնէ կատ-
 դած իրենկերտի վիճագոյն զօրութեամբ, ձեռ-
 քերիկն ջառնելով: Պատկեր ընդհանրական):

Տ Ե Ս Ի Լ Վ Ե Ր Զ Ի Ն

ՀԵՐՐԿՈՍ, ԶԻՆՈՆՆՐԵՔ, ՅԱՎՈՅ, ԳԷՈՐԳ, ՍԱՄՈՒԷԼ,
 ՍԱՆԱԿ և ՎԵՐԻԵՐ:

Հեկ. — Զօրացի՛ր, բարեկամ. յաղթութիւնը
 մերն է: (Աւ Հռիթարտ) Բարեկամ, զքեզ ա-
 զատեցի: Հիմա գո՛հ եմ:

Սմէկըր. — Ո՛հ ուրախութիւն:

Հեկ. — Հոիքարտոս, բարեկամներ, եկէ՛ք ամէնք-
 նիդ իմ այս ծոցս: Ուրախացի՛ր, բարեկամ,
 հուսկ ուրեմն քու արդար դատը յաղթանա-
 կեց:

Հռիթ. — Ա՛հ, ես այս բերկրապատար ցնծու-
 թեան առջև չեմ դիմանար: Հոս նշանակուած
 էր իմ թշուառութեանց վերջ մը: Հա՛յր իմ,
 սիրելի որդեակ, ո՛հ այո՛, շնորհակալ ըլլանք
 Երկնից, և աւարտենք գեղեցկագոյն բարեկա-
 մութեան մէջ մեր կենացը վերջին տարիները:

Առաջին անգամ ներկայացուած Միսի-
 թարեան Վարժարանին մէջ ի Քաղկեդոն.
 1892 Յունուար 20

« Ազգային գրադարան



NL0375289

60923